№ 17 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 23

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 23 № 17

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, յունվարի 27-ին, Արտիստիկ Ընկերութեան դահլիճում նշանակված է

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

անդամների հանդիսաւոր արտակարգ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

հայոց թատրօնի յիսնամեակի առիթով։

Զբաղմունքի առարկաներն են. 1) ընտրութիւն պատւաւոր նախագահի և ընդհ. ժողովի նախագահի, 2) հայոց թատրօնի յիսնամեակը.—զեկուցում. 3) Թիֆլիսում մշտական թատրօնական շինութեան կառուցման հարցը.—զեկուցում. 4) վարչութեան առաջարկութիւնները. ա) թատրօնի շինութեան ֆօնդի կազմակերպման մասին. բ.) ընկերութեան պատւաւոր անդամների ընտրութեան մասին. գ) երկու մրցանակի, մէկ ստիպենդիայի հաստատման մասին. 5) հայոց թատրօնի յիսնամեակին վերաբերեալ ընթացիկ հարցեր։

Ժողովի բացումը ուղիղ ցերեկվայ ժամը 11-ին

Երկուշաբթի, յունվարի 28-ին, Արտիստիկ Ընկերութեան թատրօնում կը կայանայ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ի յիշատակ հայոց թատրօնի յիսնամեակի։

Ծրագիրը. I. ՀԱՃԻ ՍՈՒԼԷՅՄԱՆ. վոդ. 1 գործ. Գ. Օ. Տուրգենեբեգովի (խաղացված առաջին անգամ յունվարի 28-ին 1858 թ.)

II. ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ.—զեկուցում.

III. ՊԵՊՕ, Սունդուկեանի.—I գործ.

IV. ՊԱՏՒԻ ՀԱՄԱՐ, Շիրվանզադէի.—4 գործ.

V. Ընթերցումն շնորհաւորութիւնների, հեռագիրների, ընդունելութիւն պատգամաւորների.

VI. ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ—կենդանի պատկեր.

Ներկայացման սկիզբը ուղիղ երեկոյեան 8-ին։ Տոմսակները վաճառվում են միմիայն թատրօնի կասսայում և ոչ ոքի չեն ուղարկվում։

Ծ. Գ.—Այն հաստատութիւններն ու անձնաւորութիւնները, որոնք ցանկանում են ուղարկել հեռագիրներ, շնորհաւորութիւններ և պատգամաւորութիւններ, թող բարեհաճեն վաղօրօք դիմել Մ. Ա. Ջաքարին։

„ԳԵՂՈՒՆԻ“

Թիֆլիսի Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտնում է, որ ի նպաստ Կովկասի հայ սովեալների նուիրված ԳԵՂՈՒՆԻ շքեղ և պատկերազարդ հրատարակութիւնից, որի մասին անցեալ տարի լրագիրներում յայտարարվեց, մնացել են մօտ 200 օրինակ. ուստի ով կամենում է և սովեալներին օգնել և ունենալ իր սեղանի համար մի գեղեցիկ և շքեղ զարդ, թող շտապէ գնել ԳԵՂՈՒՆԻՆ, որի արժէքն է 4 ռ., և 50 կ. պօստի ծախք։ Ցանկացողները պէտք է դիմեն Յանձնաժողովի գործավար Ս. Եսայեանին, խմբագրութիւն «Մշակի»։

(կ.) 5—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Հինգշաբթի, յունվարի 24-ին

Ընտանեկան երեկոյ

Անդամների, կանդիդատների, սրանց ընտանիքների և հիւրերի համար

Ռուս-մալօրօս. դրամ. եւ օպերետ. արտիստների ընկերակցութիւնը

կը ներկայացնէ

„Ազատման Գարկուշան“

Պատմական պատկերներ 3 տեսարաններով, Մալօրոսիայի և Զապօրօժեի Սէչի միացման ժամանակներից, գեղեցիկ ազգային տարազներով, երգով, խմբով և պարերով, հեղ. Օ. Ստորօժենկօյի։

2-րդ գործողութեան ժամանակ կը ներկայացվի

ԶԱՊՈՐՕԺԻ ՊԱՐ ՁԷՆՔՈՎ.

Մասնակցում է ամբողջ խումբը

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ ուրբաթ, փեբրվարի 1-ին, նշանակված է ընդհանուր ժողով, որը շարունակութիւն կը համարվի յունվարի 15-ի ընդհանուր ժողովի։ Այս ընդհանուր ժողովում տեղի կունենան աւագների թեկնածուների ընտրութիւնները։

Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։

(յ. 23 փ. 1) 2—1

ԴԷՊՔԵՐԸ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

Հեռագիրները յայտնեցին, որ Լիսաբոնում սպանվեցին Պորտուգալիայի թագաւոր Դոն-Կարլոսը և գահաժառանգը։ Այդ սպանութեան մասին ահա թէ ինչ են հաղորդում Լիսաբոնից և Պարիզից։ Յունվարի 19-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 6-ին, թագաւորը Ամալիա թագուհու, թագաժառանգի, ինֆանտ Մանուէլի հետ միասին քաղաքի շրջակայքում գտնվող Վիչմօվա վիլլայից եկաւ Լիսաբոն։ Այդտեղ, մեծ հրապարակի վրա, դէպի պալատը գնալիս, զինաւորված անձանց մի խումբ իրանց կարաբիններից հրացաններ արձակեցին, որոնցից վիրաւորվեցին թագաւորը և թագաժառանգը, որոնք շուտով և վախճանվեցին։ Հրազարկ արձակողներից երեքը տեղնուտեղը սպանվեցին։ Անվնաս մնացին թագուհին և ինֆանտը։

Իսկ Պարիզից հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները։ Թագաւորը վիրաւորվեց երեք գնդակով, որոնցից մինը մտաւ ծոծրակի, միւսը՝ ուսի և երրորդը՝ վզի մէջ. վերջինը, կտրելով քներակը, առաջացրեց վայրկենական մահ։ Գահաժառանգը վիրաւորվեց նոյնպէս երեք գնդակով գլխին և կրծքին։ Թագաւորը տարվեց ծովային արսենալը մեռած. գահաժառանգը դեռ կենդանի էր, բայց շուտով նոյնպէս վախճանվեց։ Թագուհին և ինֆանտ Մանուէլը վերադարձան պալատ ժամը 7-ին։ Հրապարակը, ռատուշը և պօրտուգալական բանկը զօրքերը գրաւեցին։ Թագաւորի պահակը՝ Ֆրանչեսկօ՝ տեղնուտեղը սպանեց արքայասպանին։ Ոստիկանութիւնը սպանեց միւս երկուսին, և նրանց դիակները դրված են ռատուշում։ Մարդասպանների անձնաւորութիւնը յայտնի չէ։ Քաղաքում տիրում է անսահման գայրոյթ և յուսահատութիւն։

Այս ողբերգական դէպքերը լուսաբանելու համար պէտք է ասել, որ Պօրտուգալիայում վաղուց տիրում են խռովութիւններ, և անարխիստական շարժումները վերջերս սաստկացել էին։ Քաղաքական կուսակցութիւնները այդ երկրում զանց չեն առնում դիմել տէրրօրիստական ակտերի, յաղթութիւն ձեռք բերելու համար։ Նոյնիսկ զօրքի մէջ ճարակված էր ապստամբական ոգին և մի քանի զօրագնդեր կասկածվում էին անհաւատարմութեան մէջ ու զրկվել էին զէնքից։ Վերջերս յեղափոխական բռնկումները սաստկացել էին, և լուր էր տարածված, որ հանրապետականների և արմատականների մի խումբ կազմակերպում է զինաւորված ապստամբութիւն յունվարի 18/31-ին. այդ առիթով մեծ յուզմունք էր տիրում, և կառավարութիւնն ևս, որ մեծ անհաւանականութիւն էր զգացել վերջերս ձեռք առած իր ֆինանսական միջոցներով, ահագին պատրաստութիւններ էր տեսել, որոնք չը կարողացան, սակայն, աղէտի առաջն առնել, և Դոն-Կարլոս թագաւորը ընկաւ գնդակի հարուածներից։

Պորտուգալիայի թագաւոր Կարլօս I, որ Լուդովիկ I թագաւորի և իտալական թագաւոր Վիկտոր Էմմանուէլի դուստր Մարիա Պիայի որդին էր, ծնվել է 1863 թւին, ուրեմն 44 տարեկան էր։ Նա գահ բարձրացաւ 1889 թ. հոկտ. 19-ին և ամուսնացած էր Օրլէանեան իշխանուհի Ամալիայի հետ։ Անդրանիկ որդին, գահաժառանգ Լիւդովիկ Ֆիլիպպը, որ նոյնպէս սպանվեց, ծնվել է 1887 թ., իսկ միւս որդին, որ այժմ պէտք է գահ բարձրանայ, ինֆանտ Մանուէլը, ծնվել է 1889 թ.։ Նոր թագաւորը, ուրեմն, այժմ 18 տարեկան է և անչափահաս, հետևաբար դժուար թէ նա կարողանայ կարգը վերահաստատել երկրում, և, հաւանօրէն, դրացի Սպանիան միջամտութիւն կը գործէ Պորտուգալիայի գործերի մէջ։

Մի ժամանակ հզօր և ծաղկեալ Պօրտուգալիան, ներկայումս, իջած լինելով երկրորդական աստիճանի, ներքին գժտութիւններով միանգամայն քայքայել և կազմալուծել է իր կանոնաւոր զարգացումը, և կուլտուրական խաղաղ բարգաւաճումը երևի դեռ երկար կանգ կառնէ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգի Թերթերին հեռագրում են.

Ուրմիա, 14 յունվ.—Ֆազիլ-փաշան, մօտենալով Սօվուջ-Բուլաղին, ռմբակոծելու սպառնալիքով առաջարկեց Ֆարմանին յետ նահանջել քաղաքից։ Ֆարմանը իր զօրախմբով հասաւ Միանդաբ։ Այժմ Սօվուջ-Բուլաղը գրաւված է թիւրքերից։

Թաւրիզ, յունվ. 14-ին.—Ֆարմանը Սօվուջ-Բուլաղն առանց կռւի յանձնեց թիւրքաց զօրքին։ Յանձնելու լուրը տեղումս յարուցեց մի շարք անկարգութիւններ։ Չուկան փակ է։ Կուսակցական հրացանաձգութիւնը վերսկսվեց։

—

Թաւրիզ.—Շնորհիւ հոգևորականութեան և ականաւոր անձնաւորութիւնների ժողովների՝ կուսակցութիւնները հաշտվեցին։ Ուրմիայում սահմանադրական մասնաժողովի նիստերը տեղի կունենան շաբաթը երկու անգամ։

Պետերբուրգի պարսից դեսպան նշանակված Լիսհակ-խան-Մուֆախխամ-ուդ-Դօվլէն, որ տաս տարի շարունակ վարել է Պետերբուրգում քարտուղարի պաշտօն, ապա եղել է մինիստր Կահիրէում, Վաշինգտօնում և Վիէննայում։

Ուրմիա.—Այսօր սկսվում են խառն սահմանագլխային մասնաժողովի կանօնաւոր նիստերը։

Սօվուջ-Բուլաղի դէպքերի մասին Մուխրշամ-ուս-Սալթանէի պաշտօնական հարցապնդման Թահիր-փաշան պատասխանեց, որ Ֆազիլ-փաշայի նպատակն էր միայն վերջ տալ քիւրդերի անկարգութիւններին Սօվուջ-Բուլաղի վիճակում, որը և նա կատարեց։ Ֆարման-Ֆարման թողեց քաղաքը առանց աչքի ընկնող պատճառի, որից յետոյ շրջանի ազգաբնակութիւնը խնդրեց Ֆազիլ-փաշայի հովանաւորութիւնը, որին մերժել չը համարձակվեց։(«К.»)

—

Կ. Պօլսի անգլիական դեսպանը յանձնարարել է Փոքր-Ասիայում գտնվող իր հիւպատոսներին, որպէսզի սրանք ականատես հետևեն այն քննութիւնների ընթացքին, որ Նազըմ փաշայի կողմից կատարվելու են հայկական վեց նահանգներում։ Անգլիան պատրաստվում է նախաձեռնութիւն յանձն առնել յիշեալ վիլայէթներում նոյն բարենորոգումները մտցնելու գործում, ինչ բարենորոգումներ որ մակեդոնական երեք նահանգների վերաբերմամբ մշակվեցին։

—

Պետերբուրգ, 19 յունվարի

„Новое Время“-ն հերքում է վերջին ժամանակներս տարածված այն լուրը, թէ շուտով մինիստրների խորհրդի նախագահ Ստօլիպինը հրաժարվելու է իր պաշտօնից։

Մոսկվայում պահնորդական խումբը ձերբակալել է համառուսական երկաթուղային միութեան երեսուն անդամների։

Երկրորդ Պետական Դումայի սօցիալիստ-պատգամաւորների վճռաբեկ բողոքագիրը սենատում քննվելու է յունվարի 28-ին։ Բողոքագիրը քննվելու է դռնփակ։

Չախակողմեան-հոկտեմբերեանները պաշտպանելու են Մակլակօվի այն հարցապնդումը, որ յանձնված է Պետական Դումային Վիլնայի պահնորդական բաժնի մի շարք ապօրինի գործողութիւնների մասին։ („Касп.“)

—

Յունվարի 21-ին, Թիֆլիսի 5-րդ քաղաքամասում տեղի ունեցած հրացանաձգութեան մանրամասնութիւնները.

Յիշեալ օրը, ցերեկվայ ժամը 1 և 20 րօպէին, այն րօպէին, երբ հայրենասիրական ընկերութեան անդամ Նիկիֆօր Տիմօֆէեվիչ Պէրուշկինը, նոյն ընկերութեան անդամներ՝ Միխայիլ Սերգէեվի և Կօնստանդին Դիչէվօվի ուղեկցութեամբ վերադառնում էր վրաց-իմերէթական սինօդական դրասենեակից, Արմեանսկի բազարի և Սօլօմոնովսկի փողոցի անկիւնում, № 14, Այվազովի տան հանդէպ, «Մաու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Մռայլ է Պարսկաստանի իրականութիւնը։ Մի կողմից արտաքին քաղաքական վտանգաւոր կացութիւնը, միւս կողմից՝ ներքին կուսակցութեան ույժերի, տիրող դասակարգերի և յեղափոխական հոսանքների ընդհարումներն ու սաստկացած երկպառակութիւնները կրկնապատկում են աղքատ ժողովրդի ցաւերը, քայքայում են նրա տնտեսական անմխիթար վիճակը և ձգում կեղեքիչների դիրկը։ Ականատեսները ճնշող գոյներով են պատկերացնում պարսկական ժողովրդի արդի դրութիւնը, մանաւանդ խուլ անկիւններում, ուր ներկայումս կատարեալ անիշխանութիւն է տիրում։ Ժողովուրդը գտնվում է զանազան խմբակների սպառնալիքների ներքոյ. չը գիտէ ում լսէ և որից երես դարձնէ. չը գիտէ անջումանի անդամներին, յեղափոխականներին լսէ, թէ իր խաներին, բէգերին և աղաներին։ Ուզում է լսել առաջիններին, նրա քարոզներին հետևել, բայց անպատեհ իրականութիւնը կօշմարի նման ծանրանում է նրա ուսերի վրա. անմիջական տէր բէգը, աղան մտրակը ձեռքին իրեն սպառնալից կանգնած է շարունակ այդ անպաշտպան գիւղացու առաջ։

—Անջումանը հեռու է, իսկ աղան գուբ չունի,—այդպէս բնորոշեց իրանց դրութիւնը նորերս (դեկտեմբերի 10—15-ին) Պարսկաստանից եկած երկու թուրք գիւղացիներից մէկը։

Նրանք քիւրդաշտցիներ*) էին, անցել էին Արաքսը և եկել մեզ մօտ այս ձիւն-ձմեռը աշխատանք որոնելու։ Տարվայ այս ժամին ինչ աշխատանք կարող էին ունենալ այդ փախստականները։ Նրանք դադար չունէին. խոր վիշտը ճակատներին, մռայլ դէմքով, այս ու այն կողմ էին ընկնում, շրջում էին ձեռքները կրծքներին ծալած, շլինքները ծռած։

Մի ինչ-որ ծանր հոգս ակներև կրծում, հալածում էր նրանց։

Ես չը կարողացայ այլ ևս զսպել իմ հետաքրքրութիւնը և հարցրի այսպիսի անժամանակ հայրենիքից հեռանալու պատճառը։

Տարիքաւորը ծանր ախ քաշելով, արտասուախառն աչքերը գետին յառած՝ պատասխանեց.

— Զուլում է մեր երկրում. ամբողջ Պարսկաստանի մէջ մենք թաղվելու տեղ չունեցանք. փախել-եկել ենք ձեզ մօտ, որ գոնէ գլուխներս ազատենք։

Այնուհետև նա շարունակեց նկարագրել իրանց անելանելի դրութիւնը։

Հետզհետէ բացվում էր նրա լեզուն. նա կարծես որոնում էր մի կարեկցող մարդ, որի առաջ բանար իրանց ճնշող դարդերը, նկարագրէր իրանց պատուհաս բաղդը և դրանով, գոնէ, մի քիչ թեթևանար։

Ծանր ու սարսափելի էր այն պատմութիւնը, որ անպաճոյճ բառերով հաղորդում էր նա։

— Սրանից հինգ ամիս առաջ,—բացատրեց խօսողը,—մեր գիւղը եկան անջումանի անդամները և, հաւաքելով գիւղացիներին, յայտնեցին, որ այսուհետև մեր բաղդը մենք պիտի տնօրինենք։ Այնուհետև ցոյց տալով մեզ մեր իրաւունքները, ասացին, որ մինչև այժմ արած մեր ծառայութիւններն ու հլու հպատակութիւնները խաներին, բէգերին աւելորդ են եղել. զուր տեղից տուել ենք աւելորդ տուրքեր, քաշել ենք կօռ ու բէգեարա, եղել ենք խաների ճորտը, խոնարհվել ենք ոչ միայն խանին, այլ և նրա ծառային։ Ահա այդ բոլորը արել ենք, բայց չը պէտք է անէինք, որովհետև խանը ոչ հողատէր է, ոչ իրաւունքի տէր, բայց բռնի ույժով, առանց խղճահարութեան, ծանր քարի նման նստած մեր շլինքին՝ ճնշել է մեզ և, տղրուկների պէս քամելով մեր արիւնը, ուժասպառ արել, իրաւազուրկ դարձրել։

«Հասել է ձեր ազատութեան ժամը. դէն ձգեք այդ ճնշող ծանրութիւնը, փշրեցէք ձեր կապանքները և հետևեցէք անջումանի օրինակին»,—ասացին նրանք մեզ։

«Ապա կանչելով մեր գիւղի խանին—Խանլար աղային, նրա ներկայութեամբ բացատրեցին անջումանի ծրագրի բովանդակութիւնը, մեր իրաւունքներն ու պարտականութիւնները և հրամայեցին մեզ չենթարկվել խանին, իսկ վերջինիս՝ որ էլ այսուհետև իրաւունք չը համարի անելու այն, ինչ որ արել է մինչև այսօր, չը նեղի և չը ծանրաբեռնի գիւղացիներին։

«Լաւ էին ասում, ժողովրդի հոգուն էին քաշում։ Եւ մենք լսեցինք նրանց։ Կապանքից ազատված առիւծի նման այլ ևս չը գիտէինք ինչ բան է հնազանդութիւնը, խանին ճանաչել չէինք ուզում, գլուխ չէինք խոնարհում նրա առաջ, նրա ծառայի ձիու սանձը չէինք բռնում. կտրեցինք հողի տասանորդը, զրկեցինք փէշքաշներից. ոչխարը, իւղը, ձուն մնաց մեր դաւկներին. կտրեցինք կաւէր մեր աղաների, նոյնիսկ որևէ պահանջ լսելիս՝ սպառնում էինք նրանց...

«Բայց դա երկար չը տևեց...

«Մեր կողմերից թողին գնացին անջումանի անդամները և մենք մնացինք խանի հետ երես առ երես։

«Ասպարէզը մնաց Խանլար աղային և նա վրէժխնդիր եղաւ մեզնից։

«Մենք անպաշտպան էինք, բայց պաշտպանվելու ճանապարհը որոնում էինք աղայի գթաշարժութեան մէջ։ Ուրիշ մեզ համար ճանապարհ կա՞ր արդեօք—այդ դեռ մենք չը գիտէինք։ Մենք մեր պապերի ճանապարհն էինք համարում լաւը, արդարը։ Ինչով դիմադրէինք մեզ հարստահարողին. ձեռքո՞վ։

«Ամիս ու կէս սրանից առաջ նա, հաւաքելով իր բոլոր ազգականներին, շրջակայ բէգերին և իր հաւատարիմ ծառաներին, թուով հարիւր հոգի, զինված խմբով մտաւ մեր գիւղը և իր մօտ կանչեց ժողովրդին։

«Նրանք, որոնք սկզբից արդէն նախատեսում էին մօտալուտ չարիքը՝ փախուստ տուին մօտակայ լեռները, իսկ միւսները գնացին ներկայանալու։

«Խանը նրանց բանտարկել տուեց գոմում, պահանջեց գիւղից 7000 թուման տուգանք և 5 ամսվայ տուրքերն ու հասոյթը։ Հակառակ դէպքում սպառնում էր սրի անցկացնել բոլոր կալանաւորներին, գերի տանել կանանց ու երեխաներին, գիւղն էլ աւերել և այրել։

«Քիւրդաշտը բաղկացած էր 60 տնից։ Ո՞րտեղից պէտք է լրացնէր նա մի այդչափ խոշոր գումար. դա տարիների գործ էր։

«Սակայն Խանլար աղան վճռել էր կանգ չառնել. նա հրամայեց գլխիվայր կախել գիւղի աչքի ընկնող հարուստներին ու պատւաւոր ճերմակմօրուքներին, մինչև որ վճարվի պահանջված տուգանքը։

«Ամբողջ մի օր՝ գիշեր ու ցերեկ այդպէս տանջվելուց յետոյ, նկատելով որ խնայութիւն չը կայ, հաւաքական ույժերով հազիւ լրացրին 300 թուման և հազար ու մի աղաչանքներից յետոյ իջան կախաղաններից։ Իսկ

*) Քիւրդաշտը գտնվում է Արաքսի պարսկական ափին, Մեղրի գիւղի դէմ ու դէմը։

գէր» ատրճանակներով զինված անյայտ չարագործներ, յիշեալ տան դատարկ խանութի միջից և փողոցի հակառակ կողմից, սկսեցին կրակել և, մի քանի համազարկեր պարպելով, մահացու կերպով վիրաւորեցին Պէրուշկինին և սպանեցին տեղնուտեղը Սերգէեվին ու Դիշէվօվին, ինչպէս և վիրաւորեցին փողոցով այդ պահին պատահմամբ անցնող հետեւեալ անձանց—Բագուի բնակիչ Վէնիամին Նէյմանին, Թիֆլիսի բնակիչ Արշակ Մարգարեանին և Դաւիթ Սարիբէգեանին. որանց ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոց։

Բացի յիշեալ անձերից, Իւվէլիրնի միջանցքից, յայտնի չէ ում ձեռքով, հիւանդանոց տարան հետեւեալ վիրաւորներին — Գէորգ Գրիգորեան Ալէքսանդրեանց, Սարգիս Մկրտչեան Մելիք-Գիւլնազարեանց, Կոնստանդին Նիկոլաէվիչ Եգէլաշվիլի և պարսկահպատակ Իսահակ Էյվազեան, որոնք, ինչպէս պէտք է ենթադրել, հայրենասիրական ընկերութեան անդամների վրա յարձակվողներից էին և վիրաւորվեցին՝ օգնութեան հասած քաղաքապահ ոստիկանների արձակած գնդակներից։ Չարագործները անյայտացան Իւվէլիրնի միջանցքում։

Դէպքի տեղում՝ խանութներում և սրճարաններում կասկածով ձերբակալվեցին 11 հոգի, որոնցից շատերը որոշ պարապմունք և բնակութեան տեղ չունեցող մարդիկ են։

Պէրուշկինին վիրաւորված դրութեան մէջ տարան զինւորական հիւանդանոց։ Ոստիկանութիւնը եռանդով որոնում է մահափորձերի հետքերը։

—

“Кавказъ„ լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից, յունվարի 20-ից.

Փետրվարի 4-ին կառավարիչ սենատում նշանակված է Քութայիսի ազնուականների պարագլուխ իշխան Ծերեթելու և նոյն ազնուականութեան պատգամաւորներ Երիստովի, Մաչաւարիանու և միւսների գործի քննութիւնը, որոնք դատարանին են յանձնված՝ մեղադրվելով պաշտօնակցական յանցանքի մէջ։ Պաշտպանելու են երդ. հաւատարմատարներ Պէրգամենտ, Գուրլիանդ և Գէլօվանի։

—

Մի բարի անուն

Աստրախան, 11 յունվարի

Այս օրերս Աստրախանի հայ հասարակութիւնը հողին յանձնեց մի բարի, ամենայն իրաւունքով ուշադրութեան արժանի անուն—Յովակիմ Մարութխանեանցին։

Մի համեստ անձնաւորութիւն, որ կանօնաւոր ոչ գրի սեւն ու սպիտակը գիտէր, ոչ էլ ծանօթ էր կեանքի նոր հոսանքներին, բայց նա զգացել էր ժամանակի պահանջը, նա իր միանգամայն սահմանափակ կրթութիւնով հասկացել էր, որ ժամանակիս ամենաուժեղ զէնքը—կրթութիւնն է, և ինքը լինելով անժառանգ հարուստ, իր ամբողջ 60—70 հազար կարողութիւնը կտակել է Աստրախանի հայ հասարակութեանը այն պայմանով, որ այդ ամբողջ գումարի %-ներով մեր հայ երեխաները միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում զինվեն այդ անհրաժեշտ ուժեղ զէնքով—կրթութիւնով։

Տեղիս աղքատախնամ հոգաբարձութեան հաշուով, որը և կտակակատար է նշանակված հանգուցեալի կողմից, այժմեանից հէնց մօտ 10 աշակերտ կարող են սովորել միջնակարգ դպրոցներում, որոնք աւարտելով պէտք է ուղարկվեն բարձրագոյն դպրոցները. և այսպիսով Աստրախանը մօտաւորապէս իւրաքանչիւր 15 տարուց յետոյ կունենայ մօտ 10 համալսարանական անձնաւորութիւններ, որոնք զինված գիտութիւնով՝ կը գան կը կռուեն խաւարի և տգիտութեան հետ, կը պաշտպանեն հասարակութեան շահերը, որով և կօրհնվի հանգուցեալ Մարութխանեանցի յիշատակը։

Բացի դրանից նա կտակել է, որ իր անունով երկու որդեգիր պահվի տեղիս Թեմական դպրոցում, իսկ իր ահագին խանութը յանձնել է իր երեք հաւատարիմ ծառաներին։

Կտակի այդ վերջին կէտը, որ մեզ մօտ համարեա թէ առաջին անգամն է արտայայտվում, մենք մեր բոլոր սրտից ողջունում ենք... Ուրախալի է, շատ ուրախալի, երբ ըստ արժանւոյն գնահատվում է, և վարձատրվում աշխատաւոր դասակարգը... Երբ խանութատէրը հասկանում է, որ իր դիզած հարստութեան մէջ մաս ունի, գուցէ և խոշոր մաս, նրա ծառան... Այդ բանի գեղեցիկ օրինակը մեզ տալիս է այսօր հանգուցեալ Յովակիմ Մարութխանեանցը։

Այդ էր պատճառը, որ բաւական մեծ բազմութիւն էր հաւաքվել հանգուցեալի հանդիսաւոր թաղմանը։ Ներկայ էին Թեմական դպրոցի հոգաբարձական և մանկավարժական կազմը, կանանց ընկերութեան վարչութեան անդամուհիները, աղքատաց հոգաբարձութիւնը և այլ ներկայացուցիչներ։

Հասարակութեան կողմից դրված էր մի գեղեցիկ պսակ։

Թող Մարութխանեանցի գեղեցիկ օրինակը վարակէ մեր հարուստներին...

Թող օրհնված լինի Մարութխանեանցի բարի անունը և յիշատակը։

Ս. ք. Ասլանեան

—

Մարաղա, 4 յունվարի

Անցեալ 1907 թ. դեկտեմբերի 30-ին, շաբաթ, Սօվուջ-Բուլաղի զօրքերի համար Միանդաբից ուղարկված 148 ուղտաբեռ պաշարն ամբողջովին ընկել է քիւրդերի ձեռքը։ Այդ պաշարից 80 ուղտաբեռն ալիւր է եղել, 60-ը՝ գարի, իսկ մնացեալն էլ Ֆարման-Ֆարմայի խոհանոցի առարկաները և բանակի ծախսին յատկացված գումարը։ Այդ պաշարը փոխադրվում էր 500 հեծելազօրքի և մի քիչ էլ հետեւակազօրքի ընկերակցութեամբ։ 2000 քիւրդեր դարան են մտել և յանկարծակի յարձակումով շուարեցրել են պարսիկ զօրքերին, որոնք աւելի քան 30 զոհ տալով փախուստի են դիմել։

Նոյն օրը, դեկտեմբերի 30-ին, Ֆարման-Ֆարմայի անմիջական հրամանատարութեան տակ գտնվող զօրամասը ընդհարում է ունեցել Սօվուջ Բուլաղի շրջակայքում գտնվող քիւրդ ապստամբների հետ, որոնք բաւականին կորուստ են ունեցել։ Այդ ընդհարման միջոցին քիւրդերի կողմից ընկել են, ի միջի այլ սպանվածների, նաև հետեւեալ աչքի ընկնող անձերը. 1) Կաղը աղայի որդի Ֆաշա աղան և 2) Իբրահիմ աղայի որդիներից՝ յայտնի Միրզա աղան։

Նոյն կռւում սպանվել են և 4 ջորեպաններ, որոնք Ֆերիկ փաշայի ծառաներն են եղել։ Փաշան այդ առիթով պաշտօնապէս դիմել է Ֆարման-Ֆարմային և իր ծառաներին պահանջել։ Ասում են՝ պարսիկ հրամանատարն այդ պահանջին լակօնական մի պատասխան է տուել միայն։

Պարսկահպատակ առաջնոր մի քանի քիւրդեր, որպիսիք են շէյխ Ալի-խանն ու սարդարը, դեռ ևս տատանվում են մեր կառավարութեան դէմ իրանց բռնելիք ընթացքի վերաբերմամբ։ Նրանք թէև բացարձակապէս չեն ըմբոստացել ու ապստամբվել պարսկական իշխանութեան դէմ, բայց ակնյայտնի է և այն, որ նրանց համակրանքն աւելի թեքված է դէպի Թիւրքիան։ Լուր է պտտում, թէ վերոյիշեալ շէյխ Ալի-խանն ու սարդարը մտադիր են Բեալըրայի գնալ՝ այդպիսով խուսափելու համար այն պատուհասից, որն սպառնում է նրանց պարսիկների կողմից։

Ամսիս 2-ից սկսած՝ մի գաղթ նկատելի շարժում է առաջացրել քաղաքիս շրջակայ գիւղերում։ Այդ գիւղերից գաղթում են դէպի Մարաղա։ Գաղթում են և Միանդաբից։ Գաղթողները երկիւղ են կրում երկու կողմից—թէ քիւրդական ապստամբութիւնը զսպելու համար սահմանված պարսիկ զօրքերի հարստահարութիւնից և թէ քիւրդական յարձակումից։ Т.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

—

Պետերբուրգ, 12 յունվարի

Պետական Դումայի տասնիններորդ նիստը մի փոքր աւելի կենդանի բնաւորութիւն ունէր, քան առաջին նիստը արձակուրդներից յետոյ։ Այս նիստին Դումայի գահլիճը այլ ևս դատարկ չէր, ինչպէս անցեալ անգամ, և բաւական թւով պատգամաւորներ բազմած էին իրանց տեղերում։

Այսօրվայ նիստը իր օրակարգի մէջ ունէր մի շարք կարևոր և պրինցիպիական նշանակութիւն ունեցող հարցեր. այդ պատճառով կարող էր պատահել, որ առաջ կը գար ահագին պայքար, բայց հոկտեմբերեանները մի աւելորդ անգամ էլ ապացուցին, որ նրանք մի մեռած զանգուած են, առանց որևէ օրէնսդրական նախաձեռնութեան։

Օրեր, ամիսներ անցնում են, իսկ Պետական Դուման ոչ մի էական գործունէութիւն չէ ցոյց տալիս և տրամադրութիւն էլ չունի զբաղվելու ուրիշ հարցերով, քան կառավարութեան ներկայացրած աննշան օրինագծերով։ Եւ ահա օպպօզիցիան գալիս է այդ թմրած, քնաթաթախ զուբրներին արթնացնելու և գործի գնելու։ Որպիսի՜ մոլորութիւն...

Առաջին հարուածը հասցնում է սօցիալ-դեմօկրատիան, իսկ երկրորդը ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, իրանց յարուցած պրինցիպիական հարցերով։ Նախ քան անցնելը այդ հարցերի քննութեան, Պետական Դուման զբաղվեց մի քանի մանր գործերով, որոնք նոյնպէս յայտնի հետաքրքրութիւն են առաջացնում։

Ինչպէս յայտնի է, ամեն մի օրինագիծ Պետական Դումայի նիստերում քննվելուց յետոյ անցնում է խմբագրական մասնաժողովին, որը աչքի առաջ ունենալով բոլոր թեր և դէմ կարծիքները և Դումայի ընդունած որոշումները այդ օրինագծի վերաբերեալ՝ մշակում և խմբագրում է օրինագիծը և ներկայացնում է Դումային։ Դուման այդ օրինագիծը նորից քննութեան է առնում (երկրորդ ընթերցանութիւն) և նորից յանձնում է խմբագրական մասնաժողովին, որը այս անգամ արդէն ուղղում է վերջնական կերպով ամբողջ օրինագիծը և Դուման երրորդ ընթերցանութեամբ վաւերացնում և ընդունում է նրան։

Հետևաբար խմբագրական մասնաժողովը ահագին դեր ունի կատարելու այս գործում և ամեն մի դանդաղկոտութիւն այդտեղ ներելի չէ։

Դուման այսօրվայ նիստում ընդունեց մի քանի փոքր օրինագծեր, ոմանք երրորդ և մի քանիսն էլ երկրորդ ընթերցանութեամբ, առանց հետաքրքրվելու՝ թէ արդեօք խմբագրական մասնաժողովը այդ օրինագծերը քննելիս օրինական կազմ ունեցե՞լ է թէ չէ։

Փաստը այն է, որ այդ մասնաժողովի անդամների մեծամասնութիւնը դեռ բացակայ էր քաղաքից և մասնաժողովի նիստերը չեն կայացել այդ պատճառով, բայց չը նայած դրան, մասնաժողովի կողմից զեկուցում տրված է Դումային և Դուման ընդունում է այդ առաջարկը առանց որևէ հակաճառման։ Այս էլ մի նոր ապացոյց ներկայ «գործունեայ» Դումայի անտարբերութեան և անշարժութեան վերաբերեալ։

Օրակարգի երկրորդ հարցը արդարադատութեան մինիստրի առաջարկութիւնն է, որ Պետական Դուման որոշի ժամանակաւորապէս հեռացնել Դումայի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիային պատկանող պատգամաւոր Կօսօրոտովին, որովհետև այդ պատգամաւորի դէմ սկսված է դատաստանական գործ։

Պետական Դուման նորերս զբաղվեց մի նոյնատեսակ հարցով, երբ նոյն արդարադատութեան մինիստրը առաջարկել էր հեռացնել Դումայի պարապմունքներից ժողովրդական ազատութեան կուսակցութեան պատկանող պատգամաւոր Կօլիւբակինին։ Այն ժամանակ հարցը վճռվեց այնպէս, որ այդ գործը յանձնվեց մի յատուկ յանձնաժողովի, որը, քննելով այդ հարցը ըստ էութեան, պիտի ներկայացնի Պետական Դումային իր պատճառաբանված զեկուցումը, թէ արդեօք Կօլիւբակինին պիտի ժամանակաւորապէս հեռացնե՞լ Դումայի պարապմունքներից մինչև դատի վերջանալը։

Ներկայ հարցը լինելով միանգամայն նոյնատեսակ մի գործ, պատգամաւորների մեծամասնութիւնը այն կարծիքին էր, որ այս հարցն էլ պէտք է յանձնել նոյն յանձնաժողովին։ Բայց աջակողմեանները չեն կարողանում իրանց հանգիստ և հանդարտ զգալ, երբ հարցը վերաբերվում է օպպօզիցիային։ Աջակողմեանների կողմից խօսում է «մեր» Տիմօշկինը։ Այս պարոնը, ի դէպ է ասել, ահագին կարիէրա է անում. Նրա այն յայտնի քաղաքական ճառը, որտեղ նա առաջարկում էր բոլոր կովկասեան ազգերին քշել հիւսիս, իսկ նրանց տեղ Ռուսաստանի գաղթականներով բնակեցնել և այլն, ունեցել է ահագին նշանակութիւն յայտնի շրջաններում, և այսօր մենք տեսնում ենք, որ աջակողմեանների կողմից, Պուրիշկեվիչի բացակայութեան պատճառով, նա է խօսում։ Ով գիտէ, գուցէ շուտով սև-հարիւրեակայինների պարագլուխ էլ դառնայ։ Տիմօշկինը, իրան յատուկ գռեհկութեամբ, ուզում է ապացուցանել Պետական Դումային, որ այդպիսի պատգամաւորներին, ինչպէս են Կօսօրոտովը և Կօլիւբակինը, պէտք է որքան կարելի է շուտով դուրս վռնտել։ Նա սաստիկ յարձակվում է այդ յանձնաժողովի վրա և մեղադրում է դանդաղկոտութեան մէջ, որ նրանք մինչև այժմ Կօլիւբակինին չեն դուրս արել։

Արսէն Քալանթար

ՆԱՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Բալախանի, 18 յունվարի

Ահա 17 օր է, որ «Հ. Ս. Մէլիքօվ և ընկ.» նաւթահանքի բանւորները գործադուլ են արել։ Դեռ անցեալ տարվայ 2-րդ կիսամեակէն «Նագրադ» կոչված նուէրի մասին, որը բանւորութեան անբարոյականացնող վճար է, ահագին խլրտումներ առաջացան այդ նաւթահանքի բանւորների մէջ, որոնց թիւը 300-ի է հասնում։ Կառավարիչ Տէրտէրեանը կէս տարվայ «Նագրադը» վճարելով՝ խոստանում է կէսն էլ ս. թ. փետրվարի սկզբին տալ։ Սակայն նախքան փետրվար ամսի հասնելը, կառավարիչը նոր տարվայ առիթով գրասենեակային (ադմինիստրացիա) ծառայողներին սկսում է նուէրները բաժանել։

Բանւորները, ընդունելով որ գրասենեակային ծառայողներին նուէր բաժանելով կառավարիչը նպատակ ունի ապագայում իրանց զրկելու և այդպիսով բանւորներին միւս ծառայողներից բաժանել է ցանկանում, իրանք էլ իրանց կողմից պահանջում են իրանց էլ նուէր բաժանել, սակայն կառավարիչը, փոխանակ մի կերպ բաւարարութիւն տալու, առաջարկում է հաշիւները ստանալ ու հեռանալ։ Ահա դրանից էլ առաջանում է գործադուլը, որից յետոյ ներկայացնում են մի շարք օրինաւոր և պարզ պահանջներ գրաւոր կերպով։

Աւելորդ չեմ համարում «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել այդ պահանջների մի քանի աչքի ընկնող կէտերի հետ։

Բանւորները պահանջում են իրանց որդիների և աղջկանց համար ուսուցիչներ—մէկը հայ՝ հայերի համար, մի ռուս ուսուցիչ՝ ռուս բանւորի և մի թուրք ուսուցիչ՝ թուրք երեխաների համար։

Այդ պահանջը մենք միանգամայն օրինաւոր ենք գտնում, ինչպէս թէ բանւորների և թէ նաւթահանքերի նիւթական կեանքին քաջ ծանօթ։

Պահանջում են և այն, որ հիւանդ բանւորների օրերը լրիւ վճարվեն։

Մեզանում այսպէս է. երբ բանւորը աշխատանքի ժամանակ մէջքը, կողքը, ոտը կամ գլուխը մի քիչ վնասում է և անկարող է լինում աշխատել, նրա պառկած օրերի վարձը չէ վճարվում, չը նայելով որ նա հիւանդացել է աշխատանքի ժամանակ։ Այդ ևս օրինաւոր պահանջ է, և շատ ֆիրմաներում վճարում են։

3-րդ. քաղաքում ապրող արհեստաւորներին և բանւորներին բժշկական օգնութիւն և դեղօրայք հանքատիրոջ հաշուով։

Պիտի ասել, որ նաւթահանքում ապրող բանւորները և ծառայողները օգտվում են նաւթարդիւնաբերողների միացեալ հիւանդանոցից ձրիաբար։

4-րդ. պահանջում են ռոճիկից աւելի պարտ դրամ ստանալ գրասենեակից (աւանս), ապա իւրաքանչիւր ամսու ռոճիկներից որոշ % պահել։

Այդ պահանջը միանգամայն օրինաւոր է և պահանջել չէ կարելի. այդ՝ գրասենեակի իր կամքն։ 5—6 ամիս ծառայողին ո՞վ կը վստահանայ 1—2 հարիւր րուբլի աւանսով դրամ տալ, երբ նրա ռոճիկը 20—30 ր. է ամսական։ Այդ՝ Բալախանու շրջանում ընդունված չէ։

5-րդ. հանրակառք (գլէյժանս) այս հանքից միւս հանքը գնալու։

Այդ պահանջին կարելի է բաւարարութիւն տալ, ի նկատի առնելով որ Մէլիքօվի նաւթահանքերը մէկը միւսից բաւական հեռու են և բանւորութեան համար վտանգաւոր՝ ոտքով անցնել, մանաւանդ որ հէնց անցեալներում այդ ճանապարհի վրա մարդիկ թէ սպանվել են, թէ կողոպտվել։

6-րդ. անցեալ կէս տարվայ «Նագրադ» նուէրը։

Այդ «Նագրադն» է, որ շատ նաւթահանքերում գործադուլի պատճառ է դառնում։ Մենք «Մշակի» մէջ գրել ենք, կրկնում ենք և այժմ, որ եթէ ուզում են գործադուլները գաղափարական, զուտ տնտեսական հողի վրա դնել, «Նագրադ» ասված փեշքեշը պիտի հրապարակից հանել, որովհետև մի տեսակ փչացնում է թէ բանւորութեան և թէ քայքայում արդիւնաբերութիւնը։

Եթէ մի բանւոր ամսական ստանում է 25 ր. և 20% կամ 50% նագրադնոյ, արդեօք լաւ չի՞ լինի՝ բանւորը ստանայ 30 ր., սակայն առանց նագրադի, որն այնքան շփոթութիւնների շարժառիթ է լինում, և եթէ այդ նագրադ բառը չը լինէր, այսօր Մէլիքօվի հանքում գործադուլ չէր կարող լինել։

7-րդ. «ով քեալլա չարխին ժալօնկան չը խփեց, նրան խփողներից աւելի ռոճիկ տալ»։

Ահա թէ ինչ են ուզում ասել. «Ժալօնկան» մի հաստ խողովակ է, որը տանում է մինչև 30—40 պուդ նաւթ։ Այդ խողովակով են հորից նաւթ հանում։ Պատահում է, որ նաւթ հանողը անզգոյշ է լինում, և ժամանակին մեքենան չը կանգնեցնելով խողովակը այնքան բարձրանում է, որ դիպչում է վերչկայի գլխի անիւին (քեալլա չարխի), և անիւը փշրվում է կամ դուրս գալիս տեղից, որի պատճառով էլ հանքատէրն է տուժում։

Այդ պահանջին հանքատէրը երկու ձեռքով կը ստորագրէ։

8-րդ. իւրաքանչիւր բանւորի մի տարվայ համար մի ամիս ազատութիւն, ստանալով հանդերձ այդ մի ամսվայ ռոճիկն էլ։

Լաւ երազ է, եթէ կատարվի, այն էլ տարվայ այն ժամանակը, երբ հանքատիրոջ խօսեցնել չէ լինում, մանաւանդ որ մինչև մայիս ամսվայ համար նաւթ ունեն փոխադրած Ռուսաստան և կարող է չը համաձայնվել։

9-դ. գործադուլային օրերը՝ որքան շարունակվեց։

10-դ. մինչև 27 ր. ռոճիկ ստացողին աւելացնել ռոճիկը 20%-ով, իսկ աւելի ստացողներին՝ 15%-ով։

Եւ այլ մանր-մունր պահանջներ, որոնց թիւը ընդամենը 15-ի է հասնում և որոնց համար չարժէ խօսել։

Սակայն կայ և մի այլ պահանջ, որի իրականանալու ուրախութիւնը մի սոսկալի չարիք է երևում մեր աչքին, եթէ փոքր ինչ լուրջ մտածելու լինենք։

Պահանջում են բնակարաններ այն բանւորների համար, որոնք կը ցանկանան իրանց ընտանիքը հայրենիքից տեղափոխել Բալախանի։

Երևակայեցէք, ընթերցող. այսօր բանւորը ստանում է 25 ր., 10 ր. ինքը ուտելով, 15-ը ուղարկում է հայրենիք, ուր ունի հայր, մայր, եղբայրներ, ազգականներ, շատ-քիչ վարելահող, այգի և այլն, որոնցից օգտվում են, իսկ 15 ր. նրանց սիրտ ու հոգի է տալիս։ Բանւորները բնակարանի պատճառով իրանց ընտանիքին տեղափոխել, գաղթեցնել չեն կարողանում, ի նկատի ունենալով բնակարանի թանգ լինելը։ Բայց եթէ այդ յարմարութիւնը դըրանց տրվի, ամբողջ Զանգեզուրը, Երևանի նահանգը և այլ հայաշատ վայրերի հայերը տնով-տեղով կը թափվեն Բալախանի, որի հետևանքը այն կը լինի, որ հայ գիւղացիութիւնը միանգամայն կը չքանայ, կը չքանայ և երկրագործութիւնը, այգեպանութիւնը, խաշնարածութիւնը, որը ազգի և համայնքի հիմքն է կազմում։ Դեռ չեմ ասում այն անբարոյականութիւնը, որը կը ներմուծվի հայ ընտանիքների մէջ...

Ս. Գարագաշ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Դերասան Զարիֆեան իր բենեֆիսին գրել էր «Ուրիէլ Ակօստա» դրաման, որը ներկայացվեց երկուշաբթի օր, յունվարի 21-ին, Թիֆլիսի Արտիստական թատրոնում։

Ակօստայի դերը կատարում էր ինքը բենեֆիցիանտը։ Եւ պէտք է արձանագրել, որ Զարիֆեանը կատարում է այդ դերը ինքնատիպ ըմբռնումով բաւական աջող։ Զարիֆեանի Ակօստան այնքան հերոսական անձնաւորութիւն չէ, որքան տանջվող և նահատակվող մի մտածող։ Նա իր ժամանակակից հասարակական վշտի արտայայտիչն է և մաքառում է մտաւոր խաւարի և բռնութեան դէմ։ Զարիֆեանին աջողվում է ուժեղացնել դրամատիկական տարրը Ակօստայի տիպի մէջ և մտցնել անկեղծ, սրտառուչ խորութիւն իր խօսքերի մէջ։

Զարիֆեան ստացաւ մի քանի նուէրներ և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Կանգ չենք առնում միւս դերակատարների վրա։ Կարևոր ենք համարում նկատել, որ դերասանները շատ ցածր ձայնով են խօսում և նոյնիսկ թատրոնական դահլիճի առաջին կարգերում չեն լսվում շատ խօսքեր և նախադասութիւններ։

Տեսարանները աջող էին։

Սիրող

II

Կիրակի, յունվարի 20-ին, Հաւլաբարի թատրոնում, հայ դրամատիկ խմբի սիրողները՝ մասնակցութեամբ դերասանուհի տիկին Զաբէլի և դերասան պ. Միրզօյեանի խաղացին Գունդիայի (թարգմ. Տէր-Դաւթեանի) «Քոյր և եղբայր» պատմական դրաման։

Յիշեալ խումբը նպատակ է դրել տալ մի շարք հանրամատչելի ներկայացումներ. բայց պէտք է նկատել, որ ամենաէժան տոմսակի գինն է 30 կոպէկ։

Ցանկալի է, որ պիէսները ընտրվէին ոչ թէ պատմական, այլ կեանքից, որով աւելի մեծ օգուտ տուած կը լինէին հասարակութեան։

Ներկայացումը սկսվեց $8\frac{1}{2}$-ին, փոխանակ $7\frac{1}{2}$-ին, ինչպէս որ յայտարարված էր։ Ուշ սկսելը դժբաղդաբար սովորութիւն է դարձել։

Խաղը ընդհանուր առմամբ բաւարար անցաւ։

Աջող էր տիկին Զաբէլ (Մարինէ) 2-րդ գործողութեան մէջ, եղբօր հետ պատահած ժամանակ. շփոթութիւնը շատ բնական էր։

միւսներին օրական մի քանի անգամ դուրս էին հանում գոմից, մտրակի հարուածներով կապտացնում, արիւնլուայ անում մերկ մարմինները և նորից բանտարկում։ Այդպէս տևեց մի քանի օր շարունակ։ Պատիժը զանազան տեսակ էր. մէկին ծեծում էին մտրակով, միւսին՝ շղթայով, երրորդին պառկեցնում էին և մերկ մարմինը կրակով դաղում։ Մի խօսքով գիւղացիների կրած տանջանքները աննկարագրելի էին. բռնաբարվել են կանայք, աղջիկներ, տարել են 2000 ոչխար, ամբողջ գիւղի նախիրը, թալանի են ենթարկվել՝ ապա կրակի ճարակ դարձել տները։ Աղքատված մարդիկ, կանայք ու երեխաներ ապրում են սարերում քաղցած ու ծարաւ։

«Այժմ բոլոր ապրուստից զրկված՝ մնացել ենք վիզներս ծռած. չը գիտենք թէ ո՞ւր գնանք, ո՞ւր թաքցնենք գլուխներս. ո՛չ հաց ունենք ուտելու, ո՛չ հագնելու շոր, ո՛չ էլ պատսպարվելու տեղ, քնելու անկողին... Տարան բոլորը... ոչինչ չը թողին։

«Մարդիկ ուղարկեցինք Թաւրիզ՝ անջումանին գանգատվելու, մի տնօրինութիւն խնդրելու, որպէսզի պահանջին խանից վերադարձնելու մեր գոյքը, առնեն ու յետ տան մեր ունեցածը, կամ թէ թողնեն որ մենք խանի ոտ ու ձեռն ընկած աղաչենք, թողութիւն խնդրենք և գուցէ այդպիսով կարողանանք ստանալ մեր ստացուածքը։

«Եւ բոլորը ապարդիւն անցաւ։ Մենք այսօր թողած մեր վաթանը՝ ղարիբութիւն ենք եկել և, դռնէ դուռն ընկած, այս ձիւն-ձմեռ օրերին հաց ենք վաստակում մեր չքաւոր ընտանիքի համար, որ իր վաթանում, իր սեփական տան մէջ, ինչպէս զուլումի երկրում, տանջվում է չարաչար բոլորի ձեռքից»,—վերջացրեց հեկեկալով փախստականը։

Տեսարանը ճնշող էր, պատմութիւնը անհաւատալի։ Ես հայեացքս ուղղեցի երիտասարդ թուրքին, որի աչքերի մէջ արտասուքը փայլ էր նկատվում. դա արդար զայրոյթի, գուցէ և վրէժխնդրութեան կրակն էր։ Նրա գունատ դէմքի վրա ցցված էին երակները, շրթունքները սեղմված էին ամուր, բայց նա լուռ էր և չէր լալիս...

Փորձեցի մխիթարել լացողին... Այդ միջոցին դէպի ինձ էին գալիս իմ երկու ծանօթը։ Նրանք, ներողութիւն խնդրելով, իսկոյն հեռացան իմ մօտից, անիծելով իրանց բաղդը, անիծելով խաներին, մինչև իսկ անջումանին, որ պատճառ դառաւ իրանց այդ թշուառութեան։

Մի օր էլ չէր անցել այդ դէպքից, երբ լուր ստացվեց, որ Քիւրդաշտի հարևան Սիյարի գիւղն էլ ենթարկվել է նոյն վիճակին, մնում է ծուխի և կրակի մէջ...

Ահա մի էջ Պարսկաստանի նորագոյն, յեղափոխական օրերի իրականութիւնից։

Աշխատակից

Սակայն մի քանի տպաւորութիւնը կորցնում էր։ Տիկնոջ դերը ջահել աղջկայ դեր էր, իսկ արտաքուստ նմանում էր 50—60 տարեկան պառաւ կնկայ (մազերը սպիտակ, դէմքը գունատ)։

Պր. Միրզոյեան (Օտխա-Զօլիա) իր դերում չէր։ Վերջին գործողութեան մէջ, մի քանի ձևեր աջող էին. ձայնը փչացնում էր ամեն ինչ։

Պր. Տէր-Առաքելեան (Գայօզ Փաղաւա) մի քանի տեղերում աջող էր։ Լաւ կը լինէր, եթէ պարոնը թողնէր հևալը և մի քանի տգեղ ձևեր և շարժումներ։

Պր. Սանթուրճեան (Փարաղ-փաշա) լաւ էր, բայց վերջին գործողութեան մէջ թուրը ձախ ձեռքով հանելը ծիծաղելի դարձրեց։

Մնացածները նպաստում էին անսամբլին։

Մի ընդհանուր նկատողութիւն. դերերը լաւ չը գիտէին, յուշարարի ձայնը շատ բարձր էր լսվում։

Հասարակութեան անկարգութիւններին չափ ու սահման չը կար։

Հարբածների բացականչութիւնները, փողոցային տղաների ղալմաղալը և ծծի երեխաների լացը, սրան աւելացնենք դահլիճի փոշին և ծուխը (ծխախոտի), անտանելի էին դարձնում դահլիճում նստելը։ Ցանկալի է, որ դիրեկցիան ուշադրութիւն դարձնէ այս բոլորի վրա և զսպէ անկարգութիւնները։

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր։

Ակնարկ

ՀԵՏՄԱՆ ՊՕԼՈՒԲՕՏԿՕՅԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

Սարատովից «Гол. Москвы» լրագրին հեռագրում են. «Գաւառական խաղաղ խղճուկ գիւղաքաղաքը իր տարեգրութեան մէջ չէ յիշում եկւորների այսպիսի խոշոր բազմութիւն։ Բոլոր եկածները Հետման Պօլուբօտկօյի ժառանգներն են, որի բազմամիլիոն ժառանգութիւնը պահվում է անգլիական բանկի նախասենեակներում։ Սարատովի համագումարին ներկայ լինելու համար գրվել են մօտ 500 հոգի։ Առայժմ եկել են 350 հոգի։ Միլիոններ որոնողների թւումն է Սարատովի դատաստանական պալատի գլխաւոր նախագահ Ջեբիշէվը, Մոսկվայի փաստաբան Պրժէվալսկին, գեներալ-շտաբի գնդապետ Նեմիրօվիչ-Դանչէնկօ, կալուածատէրեր, կալուածատիրուհիներ, զանազան հաստատութիւնների ծառայողներ. շատերը եկել են առանց արձակուրդ ստանալու, ապագայ հարստութեան յոյսով։

«Բոլորին միացնում է պրոֆէսոր Ռուբէցը, որ այժմեան համագումարի նախաձեռնողն է հանդիսանում։

«Համագումարը բացվեց Պօլուբօտկօյի յիշատակին հոգեհանգիստ կատարելով, որ կատարվեց արտասովոր կարգով։

«Պրօֆ. Ռուբէցը ճառ արտասանեց և շեշտեց այն հանգամանքը, որ միլիօնների գոյութեան փաստը առաջին անգամ յիշեց իր նամակով մի ամերիկացի, որը վերջում ընդունեց անգլիահպատակութիւն։ Պրժէվալսկին խորհուրդ տուեց, որ ռուս փաստաբանները համաձայնութիւն կապեն անգլիացի կօլէգների հետ և այդպիսով ճշմարտութիւնը երևան հանեն՝ թէ արդեօք գոյութիւն ունին անգլիական բանկում միլիօնները։

«Մի բան միայն աչքի է ընկնում, որ եկողները յոռետեսութեամբ են վերաբերվում դէպի պ. Ռուբէցը և նրա բացած գաղտնիքը։ Մի ուսանող իր ճառով ուղղակի կօմէդիա անուանեց այն ամենը, ինչ որ կատարվում է Սարատովում. նրան սուլեցին, իսկ ժառանգորդներից մէկը սկսեց արդէն իր բաժինը բաժանել իր ազգականների միջև։ Մօտաւոր հաշւով՝ ճանապարհածախսի և տեղեկութիւններ ստանալու մասին արդէն ծախսված է 60 հազար րուբլի։ Ամբողջ ճանապարհին բուֆէտները, հիւրանոցները մեծ աշխատանքի մէջ են։ Շատերը ծիծաղով ասում են, որ այսպիսի ուրախութիւն իրանց կեանքում չեն տեսել»։

(«Т. Л.»)

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Խարկովից, Մկրտիչ Գրիգորեանից—10 ր., 2) Եկատերինօդարից, Արաքսիա Բօյուկեանից—5 ր. 50 կ., 3) Վերին Ագուլիսից, Ստեփան Պետրոսեանի միջոցով—8 ր. 70 կ., 4) Մոսկվայից, հանգուցեալ Ս. Շահազիզի թաղման կարգադիր յանձնաժողովից, ի տեղի հոգեհացի, Մոսկվայի հայ հասարակութեան մէջ հանգանակված—400 րուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 11 յունվարի

Ահա չորս ամսից աւելի է, որ Երևանի գործակատարական ընկերութեան ընթերցարանը փակ է, կամ աւելի լաւ է ասել՝ գոյութիւն չունի։

Պատճառն ինչ է։

Սկզբում, երբ ընկերութեան վարչութիւնը բացեց ընթերցարանը և բոլոր կարգերը հոգում էր (նոյնիսկ առևտրական ուսումնարան և կլուբ բացելուն), մեր գործակատարները իրանց դժգոհութիւնն էին յայտնում վարչութեան, անուանելով նրան բուրժուական, որ չէ կարողանում ընթերցարանը հասարակական դարձնել գործակատարների համար։

Այստեղ պէտք է խոստովանել, որ գործակատարական ընթերցարանը աւելի հարուստ էր, քան թէ քաղաքինը, և բացի գործակատարներից ամենքն էլ յաճախում էին ընթերցարան, մանաւանդ աղքատ դասակարգը։

Իսկ գործակատարների ընթերցարան չը յաճախելը, նրանց «չէֆերը» վերագրում էին «ժամանակի անհանգիստ լինելուն»։

Մէկ խօսքով, դեռ ժամանակը չը լրացած, վարչութիւնը, ստիպված, հրաժարվեց, աշխատելով ընտրել դժգոհների «չէֆերին»։ Այդպէս էլ եղաւ։

Գործի գլուխ յանձնվեց «նրանց», յուսալով որ թէ դժգոհութիւնները և թէ սառը վերաբերմունքը դէպի ընթերցարանը կը վերջանան։

Բայց ցաւօք սրտի պիտի ասենք, որ ընդհակառակը եղաւ. նոր վարչութիւնով ոչ թէ դժգոհութիւնները վերջացան և գործակատարութիւնը մօտեցաւ իր ընթերցարանին, այլ նոյնիսկ ընթերցարանը փակվեց, չը նայած որ ընթերցարանի կառավարչուհին մինչև այսօր էլ ստանում է իր ռոճիկը, իսկ լրագիրներն էլ ստացվում են։

Պարոնայք գործակատարներ, ո՞ւր մնացին ձեր մեծ-մեծ խօսելը և ճառելը. ամօթ չէ՞, որ գոնէ մէկ ընթերցարան անգամ չէք պահում մինչդեռ դրա համար պատրաստի փող ունէք բանկում ընկած։

Ա-լիք

—

Ղ ա զ ա խ, 19 յունվարի

Օր օրի վրա սոսկալի լուրեր են հասնում մեզ գիւղերից սովի մասին։

Մինչև այժմ ո՞վ էր լսած, թէ առանց հացի եւս կարելի էր ապրել, բայց շատ գիւղերում բազմաթիւ ընտանիքներ վաղուց է հացի երես չեն տեսել և ապրում են դարձեալ... Մեռնում են նրանք մեղմօրէն, դանդաղ կերպով, և կարծում ենք, թէ մեռան բնական մահով. և սովատանջ քանի՜-քանի՜ մարդ, կին ու երեխայ կան, որոնց օրերը համարված են, որոնց մէջ այլևս ոյժ չէ մնացել կռիւ մղելու սոսկալի հրեշի դէմ, որոնց դէմքերին արդէն դրոշմված է մահվան կնիքը։

«Կուշտը սովածին մանր կը բրդի». Երբ պիտի հաց հասնի սրանց... սարսափում ենք, երբ մտածում ենք հարցիս պատասխանի մասին։ Քանի՜-քանի՜ խեղճ ու կրակ ընտանիքներ կան, որոնց տանը շռայլութիւն կը համարվի, եթէ անգամ գարու չոր հաց գտնվի։ Ամեն տեղից օգնութեան յոյսները կտրված է, դրա համար էլ լռում ենք. բայց, ո՛հ, որքան դատապարտելի, որքան աններելի է այս մեր լռութիւնը. չքաւորութեան երեսից հալածված, նոյնիսկ խուսափում ենք գիւղերն այցելել։

Գիտէ՞ք թէ որքան մեծ օգնութիւն կը լինէր, եթէ մինչև կառավարութեան օգնութեան հասնելը գէթ մի երկու վագօն ցորեն հասնէր գաւառիս. ո՜հ, քանի՜-քանի՜ կեանքեր կերկարէին մինչև իրական օգնութեան օրը, քանի՜ երեխայի արտասուք կը սրբէիք։

Ձեզ երկարացնում, բայց և աւելորդ չեմ համարում Շամշադինի Կարմիր-Աղբիւր գիւղից ստացված պ. Ս. Աղամեանի մասնաւոր նամակից մի կտոր առաջ բերել.

«Տէր-հայր։ Էլ ինչ գրեմ. գիւղումս այնքան սով է, որ շատ ընտանիքներ՝ 15—16 հոգուց բաղկացած, մերկ ու քաղցած փոքրիկներով մնացել են նստած. դրանք առաջ գարի ու կորեկ ալյուրից լաւ էին անում խմում, հոգի պահում, վերջին օրերս զկեռով, ճանճով ու խնձորով էին կերակրվում. շուտով կը կոտորվեն, եթէ որևէ տեղից օգնութիւն չը հասնի. միևնոյն դրութիւնն է հարևան գիւղերում. ոչ ոքի մօտ էլ, անասունն ինչ է, կատու էլ չէ մնացել... չը գիտեմ ինչ անեմ. ոչ այնքան կայ, որ բոլորին կերակրեմ, ոչ էլ գիտեմ թէ ուր փախչեմ, գլուխս ազատեմ»։

Ահա մեր գաւառի դրութիւնը։ Գոնէ գործ լինէր աշխատէին... բայց ո՞ւր է։

Ջաք. քահ. Ապրեսեան

—

Բ ի ս տ գ ի ւ ղ (Օրդ. շրջ.), 16 յունվ.

Մեր գիւղն ընկած է աշխարհիս մի յետ ընկած կողմը, որտեղ ոչ մի բժիշկ չէ ճանաչում։ Այստեղ Նոր-Տարուց սկսած ուսումնարանի բոլոր աշակերտները, որոնք 50 հոգի են, կարմրուկ են հանել 3 օրվայ ընթացքում, որի պատճառով և դասերը դադարել են, և մինչև ամսիս վերջը դասերը հազիւ կարող են սկսել։ Բայց զարմանալին այն է, որ միայն աշակերտներն են կարմրուկ հանել, իսկ միւս մնացած երեխաներից դեռ ոչ մէկը չէ հանել։

Ա.

—

Բ ե շ ի շ ք ե ն դ (Ալէքս.), 18 յունվ.

Մեր և դրացի Մունջուխլու, Աղխուլա, Հայի Փամբ և եզիդական Ղօնդաղսազ գիւղերը ամառը փչացվեցին ցրտահարութիւնից և ներկայումս կարօտութեան մէջ են։

Նախկին ժամանակներում, երբ հողը ընդարձակ էր, գիւղացիները հնարաւորութիւն ունէին պահել մեծ թւով անասուն։ Այժմ կերակրի պակասութիւնը ստիպում է կրճատել անասունների քանակը։

Մեր գիւղացիները վերջերումս ունեցան խորհրդակցութիւն հիմնելու համայնական ոյժերով շոգեշարժ ջաղաց։ Եթէ աջողվի այդ դիտաւորութիւնը, շատ լաւ կը լինի, որովհետև ջրաղացները գտնվում են 15—20 վերստ հեռաւորութեան վրա, իսկ երթևեկութիւնը միշտ ապահով չէ։

Գիւղացիները առաջ շատ խեղճ էին նայում նոր գութանների, բայց այժմ ահա մի 7—8 տարի է, որ սկսել են նոր եւրոպական գութաններ գնել և շատ էլ գոհ են նրանց տուած արդիւնքից։

Ն—ն.

ՄՈՒՐԱՑՈՂՆԵՐԸ ԵՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Կաղզւան, 6 յունվարի

Տեղիս հայոց դպրոցի նախահաշւի գլխաւոր մուտքերից մէկն էլ «աւետիսից» գոյացած գումարն է, որը թէ ինչ ստորացուցիչ միջոցներով է հաւաքվում՝ իբրև մի անարգ նմուշ և նուէր՝ «տուրքի» հարցին հակառակ խօսող՝ երիտասարդներին հրապարակ ենք հանում։ Այս տարի «աւետիս» ման եկողները ութ խմբի բաժանվեցին, որպէսզի թէ հեշտ լինի և թէ շուտ, չը քնին, ինչպէս սովորութիւն են արել մի քանի տարի յառաջ, այդ երեկոյեան։ Մեր խումբը 6 ժամին մտաւ մի արհեստաւորի տուն *), ուր անկեղծ յարգանքով ընդունեցին։ Նախ 3 րուբլի նուիրեցին, որից խրախուսված անմիջապէս դիմեցինք մի հարուստի պալատանման (համեմատաբար) տուն, ուր շինութեան և պատշգամբի արտաքին փառահեղութեան տակ՝ մեր կրկնակօշիկները հանեցինք դրսի պատշգամբում և ապա զանգակը հարեցինք։ Երբ պախինը իմացաւ մեր ով լինելը, պատասխանեց, որ ինքը չէ կարող դուռը բաց անել, մինչև որ «խանումներին» իմաց չը տայ։ Սակայն խանումները փոխանակ դուռը բաց անել տալու, «բարեխնամ» մեզ լսելի ձայնով պատուիրեց պախինին, որ ասէ՝ «խանումները տանը չեն»։ Բայց մեզ հետ եկող աշակերտուհիներից մէկը՝ ճանաչելով բարեխնամի ձայնը՝ անմեղօրէն ձայնեց. «Օր. X, դուռը բաց արա, ուսուցիչներն են, յօգուտ ուսումնարանի «աւետիս» պէտք է երգենք»։ Այնուամենայնիւ դուռը չը բացվեց և մենք կտրված ու ամօթահար հեռացանք։ Մեզ բաժին էր ընկել միայն 15 տուն, որից բացի վերոյիշեալից երկու այլ ընտանիքներ էլ չընդունեցին։ Երբ մենք բաղխում էինք նրանց դուները, իսկոյն հանգցնում էին լամպերը և լռում։

Հետևեալ օրը խմբերը հաւաքվելով դպրոցում՝ ամեն մէկը պատմեց իր գլխին եկած նոյնքան անախորժ ու ամօթալի դէպքեր, որոնք երգիծաբանական թերթերի համար հարուստ նիւթեր էին։ Այնտեղ մէկը լաւ նկատեց, թէ շատ լաւ կը լինի, որ մեր հասարակութեան հրաւիրենք ժողովի, ուր ամեն խմբից մէկը իրանց գլխին եկածը պատմելուց վերջը՝ անմիջապէս «տուրքի» հարցը առաջ բերվի, որ երկու տարի է ժողովներից ժողով է դարձել և չէ վճռվում։ Մի այլը թէ՝ «Եւ եթէ էլի հակաճառողներ դուրս կը գան, ժողովականները՝ իբրև պատիժ պարտաւորեցնեն նրանց առաջիկայ թւում «աւետիս» գնալու»։

Արդեօք այս խայտառակութիւններից յետոյ էլ մեր երիտասարդներից հակաճառողներ դուրս կը գան «տուրքի» հարցի դէմ... Բաւական չէ՞ այսպիսի անմարդավայել, ստորացուցիչ միջոցներով ուսումնարան պահելը... մինչև երբ շարունակվի այս անարգ կացութիւնը, որ դիմողներս էլ մուրացկաններն ենք դառնում, վճարողներն էլ...

Մ. Ղազարեան

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

VI

Սեկցիայի հետևեալ ժողովում իրաւագէտ պ. Յովհաննէս Սպենդիարեանը առաջարկեց էջմիածնապատկան կայքերի կառավարման համար մի առանձին բացառիկ եղանակ ու վարչութիւն սահմանել, որպէսզի, մինչդեռ միւս բոլոր վանքերի կայքերը կառավարվելու են թեմական ժողովների տնօրինութեամբ, էջմիածնի կայքերը (գոնէ վանքին կից գտնվողները) յանձնվեն մի յատուկ հաստատութեան։ Իր առաջարկը պ. Սպենդիարեանը ձևաբանեց այսպէս. «Էջմիածնում հիմնել մի առանձնայատուկ վարչական-տնտեսական խորհուրդ, տեղական ժողովրդի ընտրութեամբ, նախագահութեամբ էջմիածնի միաբանութեան ներկայացուցչի և իրաւաբանութեամբ թեմական խորհրդի. այդ խորհուրդը ենթարկվելու է կենտրոնական ժողովի իրաւասութեան»։ Այս բանաձևը դնելով՝ մերժվեց։ Այնուհետև սեկցիան ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեց առհասարակ որևէ բացառութիւն սահմանելու կարևորութիւնը, հաստատելով որ էջմիածնապատկան կայքերը, միւս բոլոր վանքերին պատկանող կայքերի նման, միևնոյն ընդհանուր եղանակով պիտի կառավարվեն, այսինքն համապատասխան թեմերի թեմական ժողովներով, որոնց նախահաշիւները և գործունէութիւնը ենթարկվելու են կենտրոնական ժողովի վերահսկողութեանը։

Վերջացնելով կայքերի կառավարման, շահագործման խնդիրը, սեկցիան դիմեց եկեղեցական, ստացվելիք եկամուտների և գումարների տնօրինման խնդրին։

Աչքի առաջ ունենալով, որ էջմիածինը տիրող եկեղեցական-վարչական բաժանման տեսակէտից թեմերից առանձին մի միութիւն է հանդիսանում (Թեմի մէջ չէ մտնում) և մանաւանդ ունի կարևոր հաստատութիւններ և բարդ բիւջէտ, առաջարկութիւն եղաւ, որ էջմիածնի ներքին տնտեսութեան համար առանձին «էջմիածնի խորհուրդ» կազմվի ճեմարանի և միաբանութեան և վանական այլ ինքնուրոյն հաստատութիւնների ներկայացուցիչներից բաղկացած, որն և ենթարկվի անմիջապէս կենտրոնական ժողովին։ Էջմիածնի խորհուրդը կը կազմէ և կիրագործէ էջմիածնի նախահաշիւը կենտրոնական ժողովի հաստատմամբ և վերահսկողութեամբ։

Կարծիքներ յայտնվեցին, որ եթէ միւս վանքերին պատկանող կայքերի եկամուտները ստանալով թեմական ժողովները կարող են անարգել տնօրինել այն իրանց թեմի պէտքերի համար, ապա էջմիածնապատկան կայքերի եկամուտների նկատմամբ պէտք է որոշ սահմանափակում դնել, որպէսզի էջմիածինն իր վարչական և կուլտուրական հաստատութիւններով նիւթական անապահովութիւնից չը զրկվի։ Ի հարկէ, սեկցիայի վերևում ծրագրված միջոցները՝ բարւոքելով կայքերի շահագործման եղանակները՝ անշուշտ արդիւնաւորելու են դրանցից մինչև այսօր ստացվող եկամուտների քանակութիւնը. հետևապէս, նիւթականի կողմից ընդհանրապէս արգելք չէ լինելու էջմիածնի ցայսօր վայելած ապահովութիւնը խախտելու կամ պակաս չափով պահպանելու նաև ապագայում։ Սակայն և այնպէս ցանկութիւն յայտնվեց, որ այդ ապահովութեան խնդիրը իր բաւարար լուծումն ու գրաւականն ունենայ նաև բիւջէտային կարգերում։ Այս առիթով առաջարկեցին, որ թէ էջմիածնի խորհրդի կազմելիք էջմիածնի նախահաշիւը, ուր որոշվելու են էջմիածնի նիւթական պէտքերը, և թէ թեմական ժողովների կազմելիք թեմական նախահաշիւները (ուր ի միջի այլոց նշանակվելու են էջմիածնապատկան կայքերի ելքն ու մուտքը) առաջարկվեն ի հաստատութիւն կենտրոնական ժողովին, որն և աչքի առաջ կունենայ անշուշտ թէ էջմիածնի հաստատութիւնների իսկական պէտքերի չափը և թէ էջմիածնապատկան կայքերից ստացվելիք եկամուտների արդար քանակը, և ըստ այնմ էլ կը քննէ ու կը հաստատէ իրան առաջարկված նախահաշիւները։

Հետևեալ ժողովում սեկցիան կրկին անգամ քննութեան առնելով նախորդ նիստերում տեղի ունեցած խորհրդածութիւնների եզրակացութիւնները, և համաձայնութեան գալով, որոշեց ձևակերպել այդ կոնկրէտ յօդուածներով, սակայն միայն հիմնական կազմակերպչական կանոնները, թողնելով մանրամասն հրահանգների և անհրաժեշտ կանոնադրութիւնների յօրինումն առաջիկայ թեմական և կենտրոնական ժողովներին, որոնց ուշադրութեան առաջարկելու համար սեկցիան ինքն էլ պատրաստելու է իր կողմից այդ հրահանգների և կանոնադրութիւնների նախագծերը։

Իսկ ներկայումս սեկցիան անհրաժեշտ է համարում ներկայացնել էջմիածնի սինօդին, որ վերջինս մատուցանէ նորին վեհափառութեան հաւանութեան և պատշաճաւոր կարգադրութեան՝ թեմական ժողովներ անյապաղ հրաւիրելու առաջարկը յետագայ հիմունքներով, որոնք շարադրված են ի հետևումն և ի զարգացումն «պօլօժենիայի» մի քանի յօդուածների և ներկայ Փոխարքայի «ժամանակաւոր կանոնների»։

Եկեղեցապատկան և վանքապատկ. կալուածների կառավարութեան և շահագործման համար սահմանվում են հետևեալ մարմինները.

ա) Ծխական ժողով.—Ծխական ժողովը 1) կառավարում է և շահագործում ծխական եկեղեցուն պատկանող կալուածները և սահմանում է ծխական տուրք. 2) իրագործում է իր շրջանում բոլոր կուլտուրական, կրթական գործերը. 3) ընտրում է իբրև գործադիր մարմին ծխական խորհուրդ մի տարի ժամանակամիջոցով, որը շարունակում է կատարել իր պարտականութիւնները մինչև նորի ընտրութիւնը. 4) քննում է ծխական խորհրդի միջոցով կազմած տարեկան եկամտից բիւջէտը։

Ծխական ժողովը գումարվում է իւրաքանչիւր տարի ոչ պակաս քան մէկ անգամ. բացառիկ դէպքերում կարող է գումարվել և արտակարգ ժողով։ Ծխական ժողովի տարեկան տեղեկագիրը ներկայացվում է թեմական պատգամաւորական ժողովին, որին վերապահվում է հսկողութեան իրաւունքը ծխի գործունէութեան վերաբերեալ։

բ) Իւրաքանչիւր թեմում գտնվող բոլոր վանքապատկան կայքերի գլխաւոր կառավարիչն ու կարգադրիչը թեմական պատգամաւորական ժողովն է՝ իբրև ընդհանուր տնօրէն թեմական ամբողջ կառավարութեան։

գ) Թեմական ժողովի պատգամաւորական կազմը ընտրվում է չորս տարի ժամանակով յետագայ եղանակով (տես «Ժամանակաւոր կանոններ» Բ. մասն)։

դ) Թեմական ժողովի կազմի լիազօրութեան քառամեայ ժամանակաշրջանը լրանալուց առաջ թեմական խորհուրդը առաջնորդի գիտութեամբ վաղօրօք պատշաճաւոր կարգադրութիւններ է անում նոր պատգամաւորական ընտրութիւնների մասին։ Հին պատգամաւորների լիազօրութիւնը շարունակվում է մինչև նորերի ընտրվելը։

ե) Թեմական ժողովը տարեկան ունենալու է առնուազն մէկ նստաշրջան թեմական ժողովից որոշված ժամանակին։ Արտակարգ նստաշրջանի թեմական ժողովը կարող է հրաւիրվել վեհափառ կաթողիկոսից, էջմիածնի սինօդից, թեմական խորհրդից և պատգամաւորների առնուազն 1/3-ից։

զ) Թեմական առաջնորդը մասնակցում է վանքապատկան կայքերի կառավարմանը թեմական ժողովում, իբրև այդ պատգամաւորական կօլեգիումի նախագահ։

է) Թեմական ժողովները իւրաքանչիւրը իր թեմի համար ըստ կայքերի և տեղական պայմանների ուրոյնութեան հրահանգներ և կանոնադրութիւններ է սահմանում թեմական ամբողջ տնտեսութեան, նմանապէս և վանքապատկան կայքերի կառավարութեան համար։

Թեմական ժողովի իրաւասութեան ենթակայ են տեղական մասնաժողովները կամ գործակալութիւնները, որոնց անմիջական կառավարութեան և շահագործման յանձնվում են յիշեալ կալուածները համաձայն այդ ժողովում ընդունված ծրագիրների և հրահանգների։ Այդ ժողովների թիւը իւրաքանչիւր թեմում և նրանց գործունէութեան շրջանը որոշում է թեմական պատգամաւորական ժողովը։

ը) Թեմի բոլոր վարչական հաստատութիւններն ու պաշտօնեաները պարտաւոր են հաշւետուութեամբ ու պատասխանատուութեամբ թեմական ժողովի առաջ։

1) Իւրաքանչիւր թեմի շրջանում գտնված բոլոր կուլտուրական, կրթական և այլ հաստատութիւնները ենթարկվում են թեմական պատգամաւորական ժողովի հսկողութեան։

2) Թեմական պատգամաւորական ժողովը պարտաւոր է հոգալ իր թեմում գտնված աւերակ եկեղեցիների և վանքերի պահպանութեան մասին։

թ) Թեմական ժողովը ամեն տարի կազմում է իր թեմի թեմական ելմուտի նախահաշիւը, որի մէջ են մտնում նաև թեմում գտնվող բոլոր վանքապատկան գոյքերի եկամուտները։

ժ) Թեմական պատգամաւորական ժողովը ընտրում է իբրև գործադիր մարմին չորս տարի ժամանակամիջոցով թեմական խորհուրդ՝ նախագահութեամբ թեմական առաջնորդի կամ նրա ներկայացուցչի։

ժա) Թեմական ժողովները հաշւետու և պատասխանատու են կենտրոնական ժողովի առաջ։

ժբ) Կենտրոնական ժողովը կազմվում է իւրաքանչիւր թեմից և էջմիածնի կողմից ընտրված պատգամաւորներից՝ նախագահութեամբ վեհափառ կաթողիկոսի կամ նրա ներկայացուցչի։

ժգ) Կենտրոնական ժողովը իրաւունք ունի փոփոխութիւն մտցնել էջմիածնի նախահաշւի և թեմական ժողովների կազմած թեմական նախահաշիւների մէջ։

Այս փոփոխութիւնները անելիս կենտրոնական ժողովը պէտք է աչքի առաջ ունենայ՝ ա) հաւասարութեան սկզբունքը, որպէսզի վանքապատկան կայքերը քանի որ ընդհանուր ազգային եկեղեցական սեփականութիւն են, զանազան թեմերի մէջ անհաւասար բաժանված լինելով՝ թեմերից մէկը անարդարապէս պակաս, միւսը անհաւասարապէս աւելի օգտվելիս չը լինի դրանցից. բ) էջմիածնի հաստատութիւնների պէտքերի չափն և էջմիածնական կայքերի եկամուտներից և թեմերից էջմիածնի գանձարանին հասանելիքի արդար քանակը։

Բաբգէն վարդապետ

Էջմիածին

*) Մ. Տէր-Վարդանեան, որի տուած 3 ր. հարուստների համեմատութեամբ ամենաքիչը 100 ր. պէտք է համարել։ Ահա թէ ովքեր են մեր հասարակական գործերի նիւթական ծանրութիւնը կրում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կիրակի, յունվարի 27-ին, Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցօվ-Դաշկօվի նախագահութեամբ տեղի կունենայ Թիֆլիսում բացվող կովկասեան Ալէքսէեվսկի կօմիտէի առաջին նիստը։ Այս կօմիտէի նպատակն է կրթութիւն տալ ռուս-ճապօնական պատերազմում ընկած օֆիցէրների և զինւորների զաւակներին։

◆ Այսօր նշանակված է ձայնաւոր տեխնիկների և բժիշկների միացեալ ժողովը քաղաքային վարչութեան շինութեան մէջ՝ Թիֆլիսում Զուբալօվի անունով երեխաների հիւանդանոց հիմնելու նախագիծը քննելու համար։

◆ Կովկասագիտական բարձր դասընթացքների վարչութիւնը դիմել էր Օդեսսայի համալսարանի ռեկտոր պրօֆ. Պետրիեվին, խնդրելով գալ Թիֆլիս և դասախօսութիւններ կարդալ դասընթացքներում։ Այժմ պրօֆէսորը մի նամակով տեղեկացրել է վարչութեան, որ նա կարող է Թիֆլիս գալ միայն աշնան սկիզբները, որովհետև նախագահն է համալսարանին կից կազմված պետական փորձադիր մասնաժողովի։

◆ Թիֆլիսի նահանգապետը, քաղաքային կանոնադրութեան 83-րդ յօդուածի հիման վրա, դադարեցնելով քաղաքային դումայի ընդունած որոշումը՝ տարեկան 1500 րուբլի կենսաթոշակ տալու քաղաքային նախկին քարտուղար Չրէլաևին, յունվարի 21-ին տեղեկացրեց Թիֆլիսի քաղաքագլխին, որ, համաձայն կառավարիչ սենատի յաճախակի բացատրութիւնների, քաղաքային ինքնավարութեան նախկին ծառայողներին կենսաթոշակ քաղաքային դումաները կարող են նշանակել միայն այն դէպքում, երբ քաղաքի միջոցները բաւարար են ծածկելու բոլոր պարտադիր ծախքերը, և որ

այդ հարցը կը լուծէ նահանգական վարչութիւնը՝ քաղաքային նախագահի քննելու ժամանակ։

◆ Յունվարի 21-ին Թիֆլիս վերադարձաւ Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգեբաուէրը։

◆ Փետրվարին հրատարակվելու է մասնաւոր մի շաբաթաթերթ «Խարազան» անունով։

◆ Թիֆլիսի բէալական դպրոցի նորընտիր վերատեսուչ Ակուեվը հիւանդացել է. դպրոցը մնացել է անխնամ։

◆ Յունվարի 21-ին Թիֆլիսի դումայի ձայնաւոր Մ. Զիկչերին մի նամակով յայտնել է քաղաքագլխին, որ նրա ծառայակցական պարտաւորութիւնները արգելում են նրան աշխատել իբրև ձայնաւոր, ուստի և հրաժարվում է ձայնաւոր լինելու կոչումից։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ծառայողները դիմել են էլեքտրաքարշի վարչութեան, խնդրելով լուսաւորել Ցիցիանովսկի վերելքը մինչև զինւորական հիւանդանոցը և Օրթաճալու գիծը, որովհետև գիշերները վատմանները չեն կարողանում նկատել մթութեան մէջ շարժվող անցորդներին և կառքերը, որից էլ առաջանում են դժբաղդ դէպքեր։

◆ Յունվարի 19-ին, ցերեկ. ժամը 2-ին, ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարել Պէսկովսկի փողոցում ապրող Ստ. Խաչիկեանի տանը, որ ծառայում է «Վոստոկի» գրասենեակում։ 3½ ժամ խուզարկելուց յետոյ՝ ոստիկանութիւնը գրաւում է 189 օրինակ մանր բրօշիւրներ հայերէն լեզուով։

◆ Այսօր երեկոյեան, քաղաքային վարչութեան շինութեան մէջ տեղի կունենայ տեխնիքական և հաշւետես մասնաժողովի նիստը՝ նախագահ ընտրելու համար։

◆ Բաթումից գրում են, որ առաւօտեան ժամը 11-ին երկաթէ Թատրոնում բացվեց ժողովրդական համալսարանը։ Ժող. համ. Բաթումի ընկերութեան նախագահի ճառից յետոյ, Բաթումի իգական գիմնազիայի դասատու Սլավուբինսկին մի դասախօսութիւն կարդաց «Ռուսաց գրականութեան մուտքը պատմութեան մէջ» թեմայով։

◆ Զաքաթալայի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել հետևեալը. «Ծխական դպրոցի հայոց լեզուի ուսուցչուհին հեռանում է այստեղից, ուստի փետրվար ամսից կարիք է զգացվում հայոց լեզուի ուսուցչի։ Ցանկացողը ստանձնել այդ պաշտօնը, շաբաթական 16 դասով, ամսական 50 ռ. ռոճիկով (ռոճիկ կը ստանայ փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսներում), թող յայտնէ այս հասցէով Закаталы, учителю закат. городскаго училища Ованесу Хачатрянъ»։

◆ ՄԵՂՐԻԻՑ մեզ գրում են. «Ստացանք Կրասնովոդսկում նոր կազմված մեղրեցիների «Միութիւն» ընկերութիւնից 24 րուբլի յօգուտ դպրոցի 3 չքաւոր և որբ աշակերտների։ Դպրոցի վարչութիւնը շնորհակալութիւն է յայտնում նուիրատուներին»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունվարի 20-ին, ցերեկվայ ժամը 3-ի մօտերը, № 536 կառքը, որով հիւանդանոց էին տանում մի վիրաւորված կնոջ, Բազգոժայա փողոցում, Վորոնցովի հրապարակի վրա պատահմամբ անցաւ սղնախեցի 15-ամեայ Գէորգի Կերաշվիլու վրայով և ծակեց փորը։ Վիրաւորված Կերաշվիլուն տարան Միքայէլեան հիւանդանոց։

◆ Յունվարի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, 6 անյայտ չարագործներ, Նորիյսկի փողոցում մտնելով Թիւրքահպատակ Պօղոս Յովսէփեանի բնակարանը, մահվան սպառնալիքով խլում են 60 րուբլի և անյայտանում են։

◆ Յունվարի 21-ին, Գոլովինսկի պրոսպեկտում ձերբակալվում է Գօրու գաւառի բնակիչ Պետր Տվալչրելիձէն, որ անցեալ տարի Գօրու գաւառապետ Գուգուշվիլուն սպանելու համար աքսորված է Վեատկայի նահանգը գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ, որտեղից էլ փախել է։ Բանտարկված էին տարան 1-ին բաժնի հաշտարար դատաւորի մօտ, որտեղից ուղարկեցին Մետեխի բանտը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Մարաղա, 28 դեկտեմբերի

Ինչպէս լսում և տեղեկանում եմ բարեկամների նամակներից, Սօվուջ-Բուլաղը շատ խառն դրութեան մէջ է. պրինց Ֆարման-Ֆարման հասել է Սօվուջ-Բուլաղ. քիւրդերը պաշարել են քաղաքը, ոչ մի երթևեկութիւն չը կայ. պօստ, հեռագիր դադարել են գործելուց. մօտ 2 շաբաթ է, որ այստեղից ճանապարհվել է Սօվուջ-Բուլաղի պօստը, բայց դեռ մինչև այժմ լուր չը կայ՝ տեղ հասա՞լ է թէ ոչ։ Մարաղայի նախկին դատաւոր Մամադ-խան սարդարը, որ այժմ գտնվում է Միանդաբում և ամբողջ զօրքի հրամանատարն է, հրամայում է պարսիկ զինւորներին, որ յարձակվեն մօտակայ քիւրդ գիւղերի վրա և թալանեն։ Շահսովան կոչված այդ կիսավայրենի ձիաւորների հետ միանում է նաև Միանդաբի և շրջակայ գիւղերի անզէն ամբոխը և յարձակվում քիւրդ գիւղերի վրա. քիւրդերը բարձրանում են սարը, բռնում են իրանց դիրքերը և կրակում են անզէն խուժանի վրա։ Շահսովան «քաջամարտիկ» ձիաւորները, տեսնելով որ իրանց ընկերներն ընկան, յետ են դառնում ու փախչում. քիւրդերն էլ փամփուշտներին ափսոսալով դիրքերից իջնում են, սրերով և դաշոյներով թափվում գիւղում եղած անզէն պարսիկների վրա։ Հաշւում են, որ պարսիկներից ընկել են 600—800 հոգի, իսկ քիւրդերից 15—20 հոգի։

Միանդաբի պարսից զօրապետը սպասում է արտաքին օգնութեան։ Մի շաբաթ առաջ Մարաղա եկան շահսովան ձիաւորները, որ պէտք է գնային Միանդաբ կռւի...

Քաղաքը մտնելուց 5 րոպէ չանցած՝ շուկան կողոպվեց։ Շահսովանները թափվել էին բազար և սկսել էին թալանել. ինչ որ տեսնում էին՝ առանց երկար-բարակ խօսելու վեր էին առնում ու գնում. երևի կարծել էին, թէ մարաղացիները քիւրդեր են, որոնց պէտք է կողոպտել։

Մինչև սրանց հեռանալը ոչ ոք չէր համարձակվում նոյնիսկ գետից ջուր բերել. օրը ցերեկով, քաղաքի մէջ ում որ հանդիպում էին, մի քանի մորակ և մի քանի հրացանի ղօնդաղ կպցնելուց յետոյ կողոպտում էին։

Մի խեղճ գիւղացի մէյդանում չամիչ էր ծախում. Թափվեցին չամիչի համը տեսնելու, և ահա տոպրակներով չամիչը անյայտացաւ։ Ահա թէ որպիսի դեսցիպլինա է տիրում շահսովանների մէջ և ովքեր պէտք է գնան Միանդաբին օգնութեան...

Տեղիս քիւրդ վաճառականները անջումանի հրամանով պահված են մի ազդեցիկ պարսիկ կրօնաւորի տանը, իբր թէ պարսիկ ժողովրդի վրէժխնդրութիւնից ազատվելու համար. բայց իրօք նրանց իբրև պատանդ են պահել։ Ա.

Սպասենք և լսենք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

«ՄՇԱԿ»-ի ներկայ համարի հետ ուղարկում ենք Էմինեան ֆօնդի հրատարակութեան յայտարարութիւնը՝ Երևանի և Բագուի նահանգների մեր բաժանորդներին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Երևանի նահանգի բժշկական վարչութիւնը հրաւիրում է
ՄԻ ԲԺԻՇԿ
ստանձնելու Նախիջևանի գաւառի երկրորդ մասի գիւղական բժշկի պաշտօնը Ջահանաբ (Ցղնա) գիւղում, Վերին-Ագուլիսի մօտ։ Գիւղական բժշկի պարտականութիւններն են. կառավարել հիւանդանոցը վեց մահճակալով, ամբուլատորիայով (երթևեկ հիւանդների համար) և ֆելդշերական պունկտով։ Ռոճիկը տարեկան 1610 րուբլի, բացի ճանապարհածախսից, որ վճարվելու է առանձին։
(23, 26) 2—1

Մի հայ ընտանիքում տրվում է մի սենեակ ճաշով կամ առանց ճաշի, չափաւոր պայմաններով։ Հասցէն՝ Վելիամինովսկայա № 24. 5—3

Ժողովրդական դպրոց
Տ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Տարրական դպրոցի ծրագրով)
Գինն է 20 կոպէկ
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը, կամ հեղինակին՝ Բագու, Милютинская, 4. 5—4

Յովհ. Յակոբեանի
ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ
համար գրվել ցանկացողների ընդունելութիւնը շարունակվում է։ Ծրագիրը և պլանը տրվում է դասընթացքներում երեկոյեան ժամը 4—7։ Գանովսկայա փող. № 7։
(չ. ու. կ.) 3—1

Յայտնվում է ի գիտութիւն յարգելի թարգմանիչների, որ արդէն ձեռնարկված է
ԺԻՒԼ ՊԷՅՕԻ
„ԿԱՄՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ“ 1—1

Մինչև փետրվարի 10-ը
Լոյս կը տեսնի
ՊՌՕՇԵԱՆ ԵՒ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ
ընդարձակ ուսումնասիրութիւնը։
Դիմել՝ Нахичевань н-Д. Духовная Семинарія, А. Теръ-Арутюнянцу. 6—1

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում տօների առիթով փաւկազմ վաճառվում են հետևեալ մանկական գրքերը (գները նշանակված են առանց կազմի. կազմերը արժեն 40—75 կ.).
Սիրտ, աշակերտի յիշատակարանը Է. Դէ Ամիչիսի, ֆրանսերէնից թարգմանեց Փ. Վարդանեան 1 ռ.
Արութին և Մանուէլ, ազգային վէպ, Ղ. Աղայեանի 60 կ.։
Ռօբինզօն Կրուզօ ճանապարհորդութիւնը և զարմանալի արկածները Դ. Դէֆօէի, թարգմ. Ս. Թառայեանց 1 ռ. 25 կ.
Մանկութիւն և պատանեկութիւն Լ. Տոլստոյի, թարգմ. Գ. Գ. 1 ռ.
Դաւիթ Կօպպերֆիլդ (պատանեկական հասակների համար) Դիկկէնսի, թարգմ. Գ. Գ. 1 ռ.
Կեանքի դպրոց, վէպ երիտասարդների համար, Դիկկէնսի, թարգմ. Գ. քահ. Աղաեանց 1 ռ.
Դասընկերներ, պատանիների ընթերցանութեան համար. Ա. Աննենսկայա, ռուսերէնից թարգմ. Կ. Գիւլնազարեան 50 կ.
Ռէյնեկէ աղուէսը Շմիդթի, գերմաներէնից թարգմ. Փ. Վարդանեան 60 կ.։
Փարաւոնի աղջիկը, պատմական վէպ, Գ. Էբերս. փոխադ. Օ. Շ. 80 կ.
Խարազի տղայ կամ երկու ախպերացող հեքիաթ, Ս. Քամալեանի 40 կ.
Գուլլիվէրի ճանապարհորդութիւնը, լիլիպուտների և բրոբդինեագցոց աշխարհներում, Ջ. Սուիֆտ, ռուսերէնից թարգ. Ղ. Աղայեան 50 կ.
Առաջին վաստակ, գրոյց պատկերազարդ Մ. Սեմենկա, փոխադրեց Լ. Մելիք-Աղամեանց 40 կ.
Փոքրիկ Ցոլակն ու խլըշիկ նապաստակը, գրոյց պատկերազարդ, Կօտ Մուլրիկա, փոխադրեց Լ. Մելիք-Աղամեանց 55 կ.
Նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ ինքդ քեզ օգնիր, գրոյց պատկերազարդ Ց. Մասսօն, փոխադրեց Լ. Մելիք-Աղամեանց 40 կ.
Անդերսընի հէքիաթները, (կաղանդի նուէր հայ երեխաներին) հեղինակի պատկերով և կենսագրութեամբ, թարգմ. ֆրանս. Տ. Զաւէն 50 կ.
Իշխանն ու աղքատը, պատմական վէպ Մ. Տուէյն, թարգմ. Գ. Շահրուզադեան 1 ռ.
Նաւի փոքրաւորը կամ պատուիր հօրդ ու մօրդ, Մ. Ռօզենհայն, գերմ. թարգմ. Յով. Լալայեան 15 կ.
Կապիտանի աղջիկը Ա. Պուշկին. թարգմ. Յ. Կարապետեան 30 կ.
Հողածին և անմեռ աշխարհ, Քամալեան Ս. 8 կ.
Նորին՝ Հէքիաթներ. 30 կ.
Միրաքի հերոս, Հասան Խանի ժամանակի պատմութիւն, Ս. Քամալեան 25 կ.
Ժամանակը ոսկի. Ս. Քամալեանի 40 կ.
Աստուած չը ճանաչող, Ս. Քամալեանի 10 կ.
Սիրտ գրքից ինն պատմութիւն (10 պատկերով) Է. Դէ Ամիչիսի, թարգ. գերմ. Ս. Քամալեանի. 40 կ.
Սասունցի Յօհան, պատմական վիպիկ Ս. Քամալեանի 30 կ.
Շէն թագաւորի աղջիկը, հէքիաթ Ս. Քամալեանի 25 կ.
Աստուած աղքատի կերպում, գրոյց Ս. Քամալեանի 20 կ.
Գալօ-Աֆօ և Խաչան, Ս. Քամալեանի 12 կ.
Ոսկի ձկնիկ Պուշկին, թարգմ. Գամառ-Քաթիպայի. 10 կ.
Գրքերը կարելի է ձեռք բերել և առանց կազմի կամ հասարակ կազմերով, այն է հատը 15 կոպէկ։
Առանց կանխավճարի ոչ ոքի գրքեր չենք ուղարկում։
Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. Галустянъ. 2—2

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճալճալաձէի № 36.
(ա.օ.) 100—93

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 100—93

ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԵԱՆ

Միայն 2 ռ. 75 կոպէկով ամեն մէկը կարող է գնել տղամարդու բաց, գեղեցիկ, գրպանի «GENEVE» ժամացոյց, որ ոչնչով չէ զանազանվում 84 պրոբի արծաթէ ժամացոյցից։ Բացի դրանից այս ժամացոյցների կազմը «REMONTOIRE» և «GENEVE» յայտնի գործարանների «ANKER»-ից է բաղկացած և լարվում են 36 ժամը մի անգամ, առանց բանալու։ Ուղարկում ենք այդպիսի ժամացոյցներ միայն կարճ ժամանակով՝ վերադիր վճարով և առանց կանխավճարի՝ 2 ռ. 75 կոպէկով հատը. զոյգը՝ 5 ռ., 3 հատը՝ 7 րուբլով։ Ձրի ուղարկում ենք սպիտակ, չը սևացող մետաղից շինված շղթայ, և բրելօկ։ Բանելու ճշտութեան համար 6 տարվայ երաշխաւորութիւն։ Հասցէագրել՝ Т-во Консеквентъ", Варшава, М. Новолипки, 16. Մէկ կամ չորս ժամացոյցի համար պօստի ծախս հարկաւոր է 50 կ., Սիբիր՝ 75 կ.։ Սիբիր առանց կանխավճարից չէ ուղարկվում։ Նամակագրութիւնը ռուսերէն լեզուով։ 1—1

Թիֆլիսի 2-դ փոխադարձ կրեդիտի ընկերութիւնից

Քաղուածք ընկերութեան անդամների 1-ին ընդհանուր ժողովի արձանագրութիւնից.

1907 թւի յունիսի 7-ին Ընկերութեան կանոնադրութիւնը հաստատվելուց և նոյն տարվայ նոյեմբերի 15-ին օրէնքների Ժողովածուի մէջ հրատարակվելուց յետոյ ընդ համարաւ № 69,—անցեալ տարվայ դեկտեմբերի 23-ին կայացաւ Ընկերութեան անդամների առաջին ընդհանուր ժողովը։ Բոլոր 1054 անդամների ընդհանուր թւից 48,750 ռ. ընդհանուր դրամագլխով՝ ժողովին ներկայ եղան 434 անդամ 17,565 ռ. դրամագլխով։ Ընկերութեան կանոնադրութեան §§ 34—35 պահանջները կատարելուց յետոյ ընդհանուր ժողովը, որպէս օրինական կարգով կայացած, 1) հաստատեց ընկերութեան ծախսերի նախահաշւի նախագիծը 1908 թւի համար 12,500 ռ. գումարի և 2) ապա քուէարկութեամբ ընտրեց.—Խորհրդի անդամներ՝ 1) Խ. Տ. Աֆրիկեանին, 2) Ս. Ս. Յարութիւնեանին, 3) Դ. Բ. Աւան-Իւզբաշեանին, 4) Ա. Ի. Գրժէբինին, 5) Լ. Ֆ. Տիգրանեանին, 6) Ա. Ն. Սէյլանեանին։ Վարչութեան անդամներ՝ 1) Խ. Ա. Վերմիշեանին, 2) Զ. Դ. Մամուլովին, 3) Ս. Ա. Բալաղեանին։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ 1) Տ. Մ. Փիլօյեանին, 2) Ա. Խ. Քալանթարեանին։

Ընկերութիւնը սկսում է իր գործունէութիւնը ներկայ տարվայ յունվարի 25-ից և կատարում է Ընկերութեան կանոնադրութեամբ նախատեսված բանկային բոլոր օպերացիաները։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎՃԱՐՈՒՄ Է

1) Ընթացիկ հաշւով հասարակ 4%
2) » » պայմանական 4½%
3) Պահեստի դրամների ցպահանջ 4½%
4) » » պայմանաժամով մինչև 6 ամիս։
5) » » » » 12 »
6) » » « աւելի երկար ըստ համաձայնութեան։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՑՆՈՒՄ Է

1) Մուրհակների զեղջման համար մինչև 3 ամիս 9%
2) » » « » 6 » 10%
3) Փոխատւութիւններ %-ով երաշխաւորված արժէթղթերի 8½%
4 » » ոչ-երաշխաւորված » 9%

Ուրիշ օպերացիաների վերաբերեալ պայմանների մասին տեղեկութիւններ կարելի է ստանալ ընկերութեան վարչութեան շինութեան մէջ, որ գտնվում է Մանթաշեանի Գոստինի դվորում, Արմեանսկի բազարում։

Ընկերութեան կասսան բացված է ցերեկվայ 10 ժամից մինչև 3½ ժամը։

Ընկերութեան պ. պ. անդամները հրաւիրվում են վարչութեան շինութիւնը ստորագրելու սահմանված պարտաւորութիւնները և տեղեկութիւններ տալու համար իրանց գործունէութեան համար, որոնք անհրաժեշտ են ընդունելութեան (пріемный) կոմիտէտի համար։

Ընկերութեան պայմանական ընթացիկ հաշիւը գտնվում է Պետական Բանկի բաժանմունքում № 30007.

Ընկերութեան տելէֆօն № 621

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Փոխադրութեամբ ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ, յարմարեցրած հայոց վեցամեայ դպրոցների ծրագրին
ԹՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ
→ԴԱՍԸՆԹԱՑ←
Մօսկվայի ուսուցիչների
1) Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ. առաջին տ. առանձին գրքոյկով գինն է 12 կ.
2) » » » » » Պրակ Ա. I. և II. տ. միասին գ. տպագ. 30 կ.
3) » » » » » Պրակ Բ. III տ. բ. տպագ. 30 կ.
4) » » » » » Պրակ Գ. IV տ. (I դաս.) բ. տպագ. 80 կ.
Շապօշնիկօվի և Վալցովի
5) Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ պրակ Դ. V տարի (II դաս.) կոտորակների կանոններով և խնդիրները լուծելու բացատրութիւններով, գինն է 40 կ.
6) Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ պր. Ե. VI տ. (III դաս.)։ Համեմատութիւններ և երից կանոններ, կանոններով և խնդիրները լուծելու բացատրութեամբ 50 կ.
7) Ձեռնարկ թւաբանութեան հայոց դպրոցների համար (ըստ Կիսելևի) 50 կ.
Գումարով գնողներին 20%
Դիմել՝ Թիֆլիս, Абасъ-Абадская площадь, Аршаку Спарапетяну և կամ Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրավաճառանոցին, կենտրոնական և «Փարոս» գրախանութներին։ 5—2
(օ. մ.)

Զգուշացէ՛ք կեղծումներից
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(Թոյլատրված Ռուսաստանում)

Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդին, պերլօյի (հօնօրրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար։
Սանտալ Միդիի յատկութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը թոյլատրում են գործածել առանց վնասելու մարսողական գործարաններին։
Պահանջեցէ՛ք գրված լինի „Midy“
Պահեստը Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։
25—10
(շ. 1 ան. չ.)